30 ՍԱՅԻՍ 1996 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 98 (1104)

Azg
Azg
armenian daily

Ռայթուոթերի դարագան կարող է հարվածել Քլինթոնի ընտրարշավին

Նրա նախկին գործընկերներ մեղադիր ճանաչվեցին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 29 ՄԱՅԻՍ, WSJ: Միացյալ Նահանգների դաշնային դատարանը մեղադիր ճանաչեց Արկանզաս նահանգի կառավարիչ Թեքերին եւ Քլինթոնների նախկին մյուս 2 գործընկերներին նյութական զեղծումների գործում, որը ծանոթ է Ռայթուոթեր անունով Ուիֆսրնյան Ռուրեգիրի գայթակղության օինակով: Կառավարիչը անմիջապես հրաժարական տվեց: Դատարանը մերժեց նաեւ նախագահ Քլինթոնի տնտեսված վկայության ընթացքում հնչած այն դրդումները, թե հարուցված գործը քաղաքական նպատակներ է հետապնդում: Դատարանի վճիռն սպառնում է ծանր հարված հասցնել նախագահի ընտրադաշտային, մանավանդ որ մրցակիցները շահարկելու են այն:

ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»

Յուրաքանչյուր երեխա ունի՞ մանկության իրավունք

ԴԱՐԻԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ. Աժ-ի մայիսի 29-ի նիստում շարունակվեց ԹՆԱՐԿՎԵԼ ՀՀ օրենքի նախագիծը Տեղական ինքնակառավարման մասին: Էդ. Եգորյանն անդրադառնալով տեղական մարմինների ինքնակառավարման ապահովման խնդրին, նշեց, որ օրինագծում ամենաշատը ինքնակառավարում այդ մարմինների համար ապահովվում է բյուջեի մասով: Օրինագիծը ներկայացնող պատգամավոր Գիսիչյանը նկատեց, որ Եվրոպական խարտիայի 10 սկզբունքներից 8-ը օրինագծում տեղ են գտել: Այնուհետեւ բարձրվեց տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի տեքստը (առաջարկով) եւ Քաղաքային կառավարման միջազգային ասոցիացիայի (ICMA) դիտարկումները օրինագծի մասին, ըստ որի «սույն օրենքը Հայաստանում տեղական ինքնակառավարման նոր հասկացող է ստեղծում»: ICMA-ի փորձագետը օրինագիծը համարում էր «շատ լավ մշակված»: Քվեարկության արդյունքում օրինագիծն ընդունվեց 117 «կողմով»: Այնուհետեւ ներկայացվեցին ՀՀ նախագահի առարկությունները եւ առաջարկները ՀՀ Աժ-ի կողմից ապրիլի 16-ին ընդունված հյուրատոսական ծառայության մասին ՀՀ օրենքի վերաբերյալ: Դրանք բացառապես լեզվական, ոճական բնույթ էին կրում: Այս առումով Ա. Ղահարյանը (ԱԻՄ) նկատեց, որ «վիրավորական եմ համարում, որ տարասխալներով կամ որոշակի անգրագետ շարադրանքով օրինագծեր են գնում ՀՀ նախագահի մոտ»: Աժ-ն քվեարկությամբ ընդունեց նախագահի առարկությունները:

Տես # էջ 2

Ճշտվում է Հրազդանի ՋԷԿ-ի ֆինանսական միջոցների չափը

ԵՐԵՎԱՆ, 29 ՄԱՅԻՍ, ՓԱՍ: Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության մնացած մասի ծավալների ճշտման եւ կառույցի ավարտման նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի որոշման համար ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Համաձայն ՀՀ կառավարությունում ընդունված որոշման, ՀՀ էներգետիկայի եւ ֆինանսների նախարարություններին հանձնարարվել է մինչեւ ամսվա վերջը համաձայնեցնել կառույցները այս տարվա բյուջեով նախատեսված Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության եւ համադասասխան ֆինանսավորման ժամանակացույցը: Հաշվի առնելով ջերմակայանի շինարարության կառավարման կառուցվածքային բարեփոխման անհրաժեշտությունը, ընդունվել է որոշում որոշ կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ:

Կիսլովոդսկի հուշագիրը համաձայնեցվա՞ծ է

ՋԻՒԼԻՍԻ, 29 ՄԱՅԻՍ, ՓԱՍՏ-ՀԲ: Ինչպես հայտնի դարձավ Վրաստանի նախագահի մամլո ծառայությունից, հունիսի 3-ին Կիսլովոդսկում կայանալիք համակովկասյան հանդիպման ժամանակ նախատեսվում է ստորագրել հուշագիր Կովկասում խաղաղություն հաստատելու վերաբերյալ: Տակավին անհայտ է այդ հուշագրի բովանդակությունը, սակայն իրազեկ աղբյուրները պնդում են, որ դրա տեքստը ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Բուլավովն արդեն իսկ համաձայնեցրել է Անդրկովկասի երկրների նախագահների հետ:

ՏՐՅԱՆ

Կովկասյան հանդիպումն անհանգստացնում է Անկարային

ԱՆԿԱՐԱ, 29 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կովկասյան գագաթնաժողովն մեծ հանդիպումը, որին մասնակցելու են Այրբեջանի, Հայաստանի, Վրաստանի եւ Հյուսիսային Կովկասի հանրապետությունների ղեկավարները, խիստ անհանգստացրել է Անկարային: Անառարկա գործակալության հաղորդման համաձայն, Անկարան որոնում է որոնում հակազդելու Կովկասում իր ազդեցության ուժեղացմանը հետամուտ Ռուսաստանի շրջադարձ ջանքերին: Գագաթաժողովը, որն անցկացվում է Ռուսաստանում, Թուրքիան գնահատում է որպես երկրին աջակցելը կանխարգելելու փորձ նախագահական ընտրությունների շեմին, իսկ այդ հանդիպմանը մասնակցելու Չեչնիայի ղեկավար Յանդարբիեւի համաձայնությունը Թուրքիան համարում է խոչընդոտ այդ ազդեցությանը: Ռուսաստանի հետ նրա կապերը նրան կարելիություն են ընձեռում նման գագաթաժողովի հրավիրելու նաեւ Ռուսաստանին:

Այս լուսաբանությունը Անկարա գործակալությանը հաստատած աղբյուրը նաեւ նշել է, որ Թուրքիային ոչինչ չի մնում անել, քան որոշանել կովկասյան խաղաղ տուն կառուցելու Վրաստանի նախաձեռնությունը:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Շուրջ 12 միլիոն դոլլար հատկացան թելեմարաթոնին

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 28 ՄԱՅԻՍ: Երկուշաբթի, մայիսի 27-ին, Լոս Անջելեսի մեջ կայացավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնը, որ տեւեց առաւոտեան ժամը 7:30-ից մինչեւ երեկոյան ժամը 7 եւ որուն ընթացին հանգանակուեցաւ տասի քան 6 միլիոն ամերիկեան դոլար:

Ու քանի որ Քլրք Քլրքորեանի Լինսի հիմնարկութիւնը նախապէս յայտարարած էր, թէ կրկնապատկելու է հանգանակուած ամբողջ գումարը, հետեւաբար թելեթոնին հատկուած գումարին վերջնահաշուարկը կը կազմէ 12 միլիոնէն հիւ մը աւելի: Այդ խոստմունքը, փաստորէն, խանդավառեց թելեթոնին բոլոր մասնակիցները, եւ արդիւնքն ալ եղաւ խանդավառիչ:

Թելեթոնին ելոյթ ունեցան ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ եւ Հիմնադրամի փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանը, Հիմնադրամի գործադիր տնօրէն Մանուշակ Պետրոսեանը, Հիմնադրամի Քալիֆորնիոյ ասենապետ Բաֆֆի Ուէյպլեանը, Արեւմտեան թեմի առաջնորդ Վայէ արք. Յովսէփեանը, դատաւոր Արմանդ Արաքելեանը եւ ուրիշներ: Տեսաերիզի վրայ ներկայացուեցաւ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի խրախուսիչ խօսքը: Հնչեց նաեւ ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի, փարաղոս Լեւոնարդ Պետրոսեանի, Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա կաթողիկոսի, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսեանի, ՀՀ ոչաբարանութեան նախարար Վազգէն Սարգսեանի, մասնաւորաններու, դեկավարներու եւ հասարակ հաղորդիներու խօսքերը: Կարճ ելոյթներ ունեցան նաեւ Ամերիկայի տարածքին Հայկական համագումարի նախագահ Հայր Յովհաննէսեանը, ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի, ՀՅԴ վերակազմումի շարժումի եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Իրենց խօսքը ըսին նաեւ խմբագիրներ Յակոբ Պողոսեանը («Նոր օր»), Օշին Քեչիչեանը (Armenian Observer), Գրիգոր Խոտանեանը («Մասիս»), Գրիգոր Հէնեանը («Նոր կեանք»), Սիպան Բարսեղեանը («Փարոս») եւ ուրիշներ:

Հեռուստամարաթոնի ընթացքին ցուցադրուեցան Արցախի, Հայաստանի Հանրապետութեան, Լոս Անջելեսի, Լիբանանի կեանքը ներկայացնող տեսաժապաւէններ, հնչեցին նահատակ Մոնթէ Մելքոնեանի եւ այլ հերոսներու խօսքերը, ներկայացուեցան «Հայաստան» հիմնադրամի կատարած աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին ֆիլմեր հատուածներ, երաժշտական եւ դրական կատարումներ:

Լոս Անջելեսի բազմաթիւ հայկական վարժարաններու աշակերտներ նոյնպէս, հանդիսաւոր կերպով իրենց գումարները նուիրեցին Սան Ֆրանսիսկոյ-Գորիս-Երեւան ճանապարհի շինարարութեան: Հեռախօսային մարթանցներ եղան Արցախէն, Երեւանէն, Լիբանանէն, Խրանսայէն, Արժանթինէն եւ ուրիշ վայրերէն:

Հանգանակուած գումարներուն վերջնահաշուարկը դիտի կատարուի եւ ճշգրիտ արդիւնքը դիտի յայտարարուի մի քանի օրէն:

Իրանում խոշոր զորավարժություն

ՖԵՅՐԱՆ, 29 ՄԱՅԻՍ, ԱՏ-AFP: Մոտ 200 հազար իրանական զինվորներ անցած օրը ավարտել են Մերձավոր Արեւելքում երբեւէ տեղի ունեցած ամենաբազմաքանակ զորավարժությունները, որոնք ուղղված էին աշխարհի նավթային շուկաներում հնարավոր նվաճողներին դուրս վռնդելուն: Երկու օր տեւած մանեւրները, որոնց կոդավորված անունը «Վեպայաթ» էր, սկսվել են հինգշաբթի եւ ավարտվել են սպասվածից ավելի վաղ, հայտնել է նորությունների ԻՌՆԱ պաշտոնական գործակալությունը: «Մեր ուժերը ի վիճակի եղան բշնամուն էթել մինչեւ պայմանական միջազգային սահմանը», ասել է իրանցի մի զինվորական պաշտոնյա: «Բոլոր ծրագրավորված վարժությունները ավարտվեցին հաջողությամբ»: Զորավարժությունները տեղի ունեցան 5400 քառ. կմ տարածքի վրա՝ Թեհրանից 80 կմ հարավ եւ շարունակվել են մինչեւ ուրբաթ երեկո: Զորախաղերում ընդգրկված էին հարյուրավոր տանկեր, ամերիկյան ուղղաթիռներ, կործանիչ ինքնաթիռներ եւ հրետանի, որոնք ռմբակոծել են «պայմանական հակառակորդի նշանակետերը»:

Հնդկաստանի նոր կառավարությունը 1 շաբաթվա կյանք ունեցավ

ՆՈՐ ԴԵԼԻ, 29 ՄԱՅԻՍ, WSJ: Ընդամենը մեկ շաբաթ առաջ նշանակված հինդու ազգայնական վարժարանի կառավարությունը, ամենակարճաւելը Հնդկաստանի պատմության մեջ, հրաժարական տվեց հատոգված լինելով, որ չի դիմանա վաղվա համար ծրագրված վստահության քվեին: Փոխարենը վարչապետ նշանակվեց ծախ եւ երգանային կուսակցությունների մի խմբավորման ղեկ Դեւե Գովդային, որը կերդվի առաջիկա շաբաթ օրը: Վերջինս 545 հոգանոց օրենսդիրում ունի ընդամենը 190 ձայն, որին վստահության քվեի կարիքի դեպքում կմիանա Կոնգրես կուսակցությունը 136 ձայնով: Վերջինս սակայն մերժեց մաս կազմել նոր կոալիցիային:

Ելցինն անակնկալ այցելեց Գրոզնի

Ամենապայծառ ինքնավարություն Չեչնիային

ՄՈՍԿՎԱ, 29 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ, ՓԱՍՏ, RFL WSJ: Մինչ Կրեմլում դեռեւս շարունակվում էին բանակցությունները Յանդարբիեւի ու Միխայլովի գլխավորած աշխատանքային խմբերի միջեւ նախորդ օրն ստորագրված համաձայնագիրը կենսագործելու ուղղությամբ, նախագահ Բորիս Ելցինը մայիսի 28-ին անակնկալ խրախուսացրեց Չեչնիա այցելելու իր վաղուցվա ծրագիրը եւ 4 ժամ եղավ Գրոզնիում: Առաջինը «Սեւեռնի» օդանավակայանի շրջանում տեղակայված ռուսական 205-րդ մոտոհրաձգային բրիգադի անձնակազմի առաջ հանդես գալով, նախագահը զինվորականներին հայտարարեց. «Պատերազմը ավարտված է, դուք հաղթել եք, շուտով բոլորդ կվերադառնաք տուն»: Ըստ դիտորդների, այցը եւ նախորդ օրվա բանակցությունները կարեւոր նշանակություն են բերելու Ելցինի նախագահական ընտրադաշտային:

Իսկ այսօր Բորիս Ելցինը հայտարարեց Չեչնիայում բարեփոխումների իր ծրագրի գլխավոր կետերը, որոնցից գլխավորն այն է, որ Չեչնիային տրվելու է լայն իրավասություններով գերիշխան հանրապետության կարգավիճակ Ռուսաստանի կազմում: Մասնավորապես, նախատեսվում է Չեչենական Հանրապետությանը վերադարձնել ֆինանսական սակաւ հարցերն ու իր ռեսուրսներ անկախ տնօրինելու իրավունքը:

Պերե՞ս, թե՞ Նաթանյահու

Աշխատավորականնե՞ր, թե՞ Լիկուդ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 29 ՄԱՅԻՍ, WSJ, RFL: Այսօր երեկոյան ժամը 7-ի դրությամբ արդեն քվեարկելու իրավունք ունեցող 4 միլիոն իսրայելցիների 80 տոկոսը ներկայացել էր քվեատուփ: Շահագրգռվածությունը շատ մեծ է: Լուսաբաղնների հաղորդումների համաձայն, ընտրական տեղամասերում ամբողջ ընտանիքներ են, որոնց կինն ու տղամարդը, որդիներն ու դուստրը հանախ քվեարկում են խառնիչ տարբեր: Երկրում առաջին անգամ վարչապետն ընտրվում է ուղղակի քվեարկությամբ եւ այսպես ընտրությունը դժվարին է ներկայիս վարչապետ եւ Աշխատավորական կուսակցության ղեկավար Շիմոն Պերեսը կամ Լիկուդ համախմբման լիդեր Բենիամին Նաթանյահու: Դժվար է նաեւ 120 տեղանոց Քնեսթի (խորհրդարանի) կազմի ընտրությունը, որտեղ բուն աջակողմյանները այս անգամ սպասվում են ոչ միայն կրոնական թեւերում կուսակցություններից, այլեւ 150 հազար արաբներից, Ռուսաստանից ներգաղթած հրեաներից էլ ավելի մեծ էլեկտորատից: Իսկական եւ ամենաժամանակակից ընտրությունը սակայն ընթանում է պատերազմի եւ խաղաղության միջեւ, Շիմոն Պերեսի Աշխատավորական կուսակցության պաշտպանած «հող խաղաղության դիմաց» սկզբունքի եւ Նաթանյահուի Լիկուդ խմբավորման «Արաբներին ոչ մի զիջում այլեւս» կարգախոսի միջեւ: Նախնական արդյունքները տակավին ոչ մեկին առավելություն չեն տալիս, եւ միայն վաղը Ռիգեբարթն հայտնի կդառնա ամեն ինչ: Մինչ այդ վարչապետ Պերեսը կնստի ջրջեց երկրի տարբեր շրջաններում նախատեսված հրապարակային իր հանդիպումներ, հանի որ մանավանդ արդյունքներ էր ստացել ծայրահեղ կրոնական հրեաներից:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Խորհրդակցական հանդիպում Գյումրիում

Մայիսի 29-ին Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը եւ ՀՎ ատենադպիր Հասմիկ Դալլաֆյանը Գյումրիում խորհրդակցական հանդիպում ունեցան տեղի ՀՌԱԿ վարչականների եւ կուսակցական ակումբների ներկայացուցիչների հետ: Ինչպես հայտնի է, ՀՌԱԿ ՀՎ որոշմամբ, կուսակցական ակումբներում մինչեւ հունիսի 10-ը տեղի են ունենալու անդամական ժողովներ, որոնցում քննարկվելու են ներկուսակցական հարաբերությունների զարգացման որոշ հարցեր եւ որոշվելու են նախագահական ընտրությունների նախընտրական փուլում ՀՌԱԿ դիրքորոշման ու գործելակերպի մասին ակումբների տեսակետները: Պրն. Միրզախանյանը հանդիպման ընթացքում խոսեց մասնավորապես ընտրությունների հետ կապված հարցերում կուսակցության դիրքորոշման հնարավոր տարբերակների մասին, որոնք կնշգրտվեն ՀՌԱԿ ոլորտավարական ժողովում, ակումբների տեսակետները ոլորելուց հետո: ՀՌԱԿ ղեկավարը ոլորտավանեց նաեւ ներկաներին հետաքրքրող հարցերին:

ՎԵՂՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայ լրագրողները Չինաստանի դեսպանին հյուր

Հայաստանում Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Յան Կեժունի հրավերով մի խումբ հայ լրագրողներ մասնակցեցին դեսպանատանը կազմակերպված հանդիպմանը, որի ընթացքում ցուցադրվեցին Չինաստանի այսօրվա բարեփոխումներին, գիտության եւ տեխնիկայի նվաճումներին, ինչպես նաեւ գյուղական կյանքին նվիրված տեսաֆիլմեր: Այնուհետեւ լրագրողներին հրավիրեցին չինական համեղ ճաշատեսակներով լի սեղանի մոտ: Մասնավորապես հայտնի դարձավ, որ երեւանում չինական թատրոն կբացվի միայն այս տարվա երկրորդ կեսին:

Ի գիտություն ԱԻՄ-ի 15-րդ հանձնաժողովի հրավիրյալների: Ազգային խորհրդում միաժամանակ ամենամյա հանդիսավոր մայիսի 30-31 ին տեղի կունենա ոչ թե Երեւանի քաղաքային ընտրության դահլիճում, այլ ՀՀ կառավարության նիստերի դահլիճում: Մուտքը Ազգ-ԱԻՄ-Ադամյան փողոցից: Հանդիսավոր մասնավորապես կանդրադառնա առաջիկա նախագահական ընտրություններում ԱԻՄ-ի դիրքորոշմանը:

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ
ՄԻԱՎՈՐՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»

Յուրաքանչյուր երեխա ունի՞ մանկության իրավունք

Սկիզբը էջ 1

3-րդ ընթերցմամբ (վերջին) ընդունվեց նաեւ ՀՀ օրենքի նախագիծը Ա.Ժ. Վերահսկիչ ղեկավարի մասին: Իսկ 2-րդ ընթերցմամբ ներկայացված ՀՀ օրենքի նախագիծը երեխայի իրավունքների մասին 124 «կողմ» ամբողջությամբ բեղուվեց: Օրենքը, հիմնվելով ՀՀ Սահմանադրության եւ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վրա, սահմանում է երեխայի իրավունքները, պետության եւ նրա հանդարտասխան մարմինների, ծնողական կազմակերպությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների եւ քաղաքացիների պարտավորությունները երեխայի իրավունքների պաշտպանության գործում: Օրենքը տարածվում է մինչեւ 18 տարեկան անձանց վրա: Հոդված 5-ում սահմանված է, որ «յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք: Պետությունը եւ նրա հանդարտասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի աճելու եւ զարգանալու համար»: Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման եւ ամրապնդման իրավունք, որի իրականացման համար պետությունը եւ նրա հանդարտասխան մարմինները աղյուսակում են առողջապահական, այդ թվում սեռական եւ վերարտադրողական առողջության կանխարգելման ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորություն, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր: Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր եւ հոգեւոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:

Օրենքում սահմանված են երեխայի այլ իրավունքներ՝ անվան, քաղաքացիության, բռնությունից պաշտպանվելու, մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունք: Արգելվում է առանց ծնողի կամ երեխայի այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչեւ 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Յուրաքանչյուր երեխա ունի նաեւ կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում մնում է ճար է:

Օրենքում սահմանված են նաեւ մանկատներում եւ գիշերօթիկ հաստատություններում ծնողական խնամքից զրկված երեխայի, ինչպես նաեւ հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխայի իրավունքները: Սահմանված են նաեւ արտակարգ իրավիճակներում հայտնված, ինչպես ռազմական գործողությունների եւ այլ ընդհարումների հետեւանքով տնից եւ անձնական զույգից զրկված փախստական երեխայի իրավունքները: Երեխան ունի նաեւ անձի անձեռնմխելիության իրավունք: Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: 18 տարին չլրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար մահապատիժ չի սահմանվում:

Ընդհանուր առմամբ, մարդասիրական օրենքիր է մշակվել, սակայն միաժամանակ այն տպավորությունն է ստեղծվում, թե օրենքի հոդվածների մեծ մասը (այդ թվում նաեւ սկզբունքային հոդվածները) բաս ավելի դեկլարատիվ բնույթ են կրում: Համենայն դեպս, օրենքիր չի տեղավորվում Հայաստանի ներկա իրավիճակում եւ անորոշ է մնում, թե հիշյալ օրենքիր կարո՞ղ է այսօր աղդահովել յուրաքանչյուր երեխայի համար կենսական մանկության իրավունքը:

Յուրաքանչյուր ծնող ցանկանում է եւ ձգտում իր երեխայի համար բարեկեցիկ եւ հանգիստ կանք ապահովել: Սակայն, ցավոք, անցումային ժամանակների հարատեւ արթում տանում է բնական մղումներ, ձգտումներ, ցանկություններ՝ Հարստանալու մեր ժամանակներում պետության խնդիրն է չաղճատել երեխայի մանկության իրավունքը: Չարչրկված, բայց հավերժական ճշմարտություն է՝ երեխաներ մեր աղագան են, գորգարեք այդ ապագան եւ ոչ միայն կոնվենցիաներով:

Ո՞վ է որոշում հասարակական կազմակերպությունների եւ քաղաքական կուսակցությունների ճակատագիրը

Ազ-ի եւ կառավարության՝ երեկվա հարցապատասխանի սկզբում որոշակիորեն սկանդալային իրավիճակ էր ստեղծվել: Այն բանից հետո, երբ Արշակ Սադոյանն անընդունելի համարեց, որ պատգամավորների՝ կառավարությանը հարց տալու իրավունքը խախտվում է, հանգի որոշ պատգամավորներ արտոնվում է ամիսը մեկ եւ ավելի հարց ուղղել կառավարությանը, իսկ պատգամավորների մի մասին՝ ոչ նման մոտեցումը որակեց «Բացահայտ լկտիություն», նիստը նախագահող Ա. Սահակյանը դիմեց պատգամավորներին, կոչ անելով նրան թույլ չտալ ոտնահարել իրենց սահմանադրական (իմա՝ կառավարությանը հարց ուղղելու) իրավունքները: Լարված իրավիճակը պահպանվեց ողջ հարցապատասխանի ժամանակ:

Շ. Քոչարյանը հարց ուղղեց արդարադատության նախարարին, թե ինչո՞ւ չի գրանցվում «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբը որպես հասարակական կազմակերպություն: Ի պատասխան Մ. Ալեքսանյանը նշեց, որ իր նախարար նշանակվելու օրվանից դիմել են 100-ից ավելի կազմակերպություններ՝ գրանցման համար: Դրանցից գրանցվել են 45-ը: Նա ավելացրեց, որ «քաղաքական խնդիր եւ խտրականություն չկա» եւ որպես ապացույց հիշատակեց ՀՀՇ-ի կանոնադրության փոփոխված տեքստը, որը հաստատվել է միայն ներկայացնելուց վեց ամիս անց:

Ի պատասխան Քոչարյանը հարցրեց, թե գրանցման համար «պարտադի՞ր է, որ ՀՀ նախագահը մասնակցի հիմնադիր ժողովին, ինչպես եղավ արդյունաբերողների դեպքում»:

Պրն Ալեքսանյանը արդարադատության ջատագովի կեցվածքով նկատեց, որ «մեկը մյուսի հետ կապ չունի»:

Ուրբեն Հակոբյանի հարցը եւս ուղղված էր նույն նախարարին: Այն վերաբերում էր ՀՅԴ-ի կասեցմանը եւ կրկնակի կասեցման որոշումներին: Նա խնդրեց պարզաբանել, թե ո՞րն է այսօր ՀՅԴ-ի կարգավիճակը, եւ ի՞նչ հիմունքներով կարող է կուսակցությունը ժողովներ հրավիրել Հայաստանում:

Պրն Ալեքսանյանը նշեց, որ կուսակցության կասեցման պատճառներ են հանդիսացել ՀՅԴ-ին օտարերկրյա քաղաքացիների անդամակցումը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ կուսակցության ղեկավարմարմինը գտնվել է արտերկրում: Սակայն ՀՅԴ-ն խախտումները վերացնելու համար անհրաժեշտ միջոցառումներ չի ձեռնարկել, ուստի եւ կասեցման որոշմանը հաջորդել է կրկնակի կասեցման մասին որոշումը: «ՀՀ արդարադատության նախարարությունը նախազգուշացնում է, որ ՀՅԴ-ի Հայաստանում կուսակցական ժողովների գումարումն անօրինական է», եզրափակեց նախարարը: Սակայն պարզվեց, որ տեղի է ունեցել թյուրիմացություն: Նախարարը, փաստորեն, պատասխանում էր ոչ թե Ռ. Հակոբյանի՝ գրավոր ուղղված հարցմանը, այլ ՀՅԴ պատասխանատու մարմնի նամակին, ինչն էլ ստիպել էր հիշյալ հարցման հետ: Եղածը եղած էր, սակայն պրն Ալեքսանյանն արդեն հրապարակել էր նախարարության որոշումը՝ ՀՅԴ-ի Հայաստանում ժողովների կարգավիճակի մասին:

Մեզ մնում է միայն հիշեցնել, որ «Ազգ» օրաթերթի հանդեպ բացահայտ կամայականություն եւ աղորհնություն ցուցաբերած նախարարության եւ ոչ մի աշխատակից պատասխան չտվեց այդ վարկաբեկիչ ֆայլի համար:

ՆԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

«Դրո». Օրինական վճիռը՝ գործը նախախնամություն վերադարձնելն է

Փաստաբան Ուրբեն Ոսկունին «Դրոյի» դատավարության երեկվա նիստում ամբաստանյալ Արմենակ Մնջոյանի վերաբերյալ պատշաճական ծառն ամփոփեց այսպես. դատական կոլեգիան իր ծեռի տակ ունի կասկածելի զեկուցագրեր, որոնք մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել: Չեն կարող պատասխանել, թե Գ. Սահակյանի վրա ինչ զենքով են կրակել: Փորձաքննության ենթարկված մատնահետքերը ամբաստանյալներից որեւէ մեկին չի համապատասխանում: Գործում կան չստուգված պատճառաբանություններ, որոնք ներկայացրել է Ա. Մնջոյանը: Ունեն նաեւ Մնջոյանի անձի վերաբերյալ՝ «հրապարակի» դեպքով եւ փայլուն բնութագրեր: Դրանցից մեկը՝ անվանի մտավորականներ Սիլվա Կապուտիկյանի, Սոս Սարգսյանի, Ռազմիկ Դավոյանի կողմից Ա. Մնջոյանին տրված բնութագիրն ընթերցեց դատարանում: Ռ. Ոսկունու կարծիքով, նման փաստերի առկայության դեպքում ճիշտ կլիներ այս գործը նախաքննություն վերադարձնել: Հակառակ դեպքում՝ «միակ անպատասխան օրենքին համապատասխանող դատավճիռը իր պատշաճյալին արդարացնելը կլինի»:

Փաստաբանը կասկածի ենթարկեց նաեւ դատաբժշկական փորձաքննությունը, որի կեղծիքներից մեկը համարեց թիվ 2287 ատրճանակի համարը 2267-ով փոխարինելը: Կոլեգիային հիշեցրեց դատաբժշկական փորձագետի՝ դատարանում տված վկայությունն այն մասին, որ ինքնիրեն իր ուսադրությունը չեն հավատել կասկածի ենթարկված 8 բվանքանի վրա: Եւ ինքը Հ. Մարգարյանի ծեռագիրը գտնել է մինչեւ 6 բվանքանը: Ավելի որոշակի, 2267 ատրճանակ գոյություն չունի Արծրունու դասընկերից առգրավված զենքերի մեջ, իսկ 2287 ատրճանակ ինչպիսի խմբի տրամադրության տակ չի եղել:

Օրվա երկրորդ կեսին Հ. Մարգարյանի վերաբերյալ իր պատճառական ճառը սկսեց կարդալ փաստաբան Ուրբեն Սահակյանը նախապես հայտնելով, որ իր պաշտպանյալի նման վերլուծությունը կատարելու է գործի 18 հատորների վրա հենվելով: Իրեն օրինախախտումների ցայտուն օրինակ նա մատնանշեց այս գործով իր երկու պաշտպանյալների՝ Հրանտ Սարգարյանի եւ Արա Հարմանդայանի անձը բնութագրող փաստաթղթերի բացակայությունը: Հայտնեց, որ առանց այդ փաստաթղթերի դատարանն իրավունք չուներ ինքնուրույն սկսելու, մինչդեռ դատախազը վճիռ կարդաց: Ռ. Սահակյանն իր պարտքը համարեց մեծ խանգարությամբ բնութագրեր ընթերցել Հ. Մարգարյանի վերաբերյալ, որոնք տված էին անվանի քաղաքական գործիչների, մտավորականների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի հրամանատարների, փախստականների, զոհված ազատամարտիկների ծնողների եւ այլոց կողմից: Ընթերցված բնութագրերը նա հանձնեց դատական կոլեգիային՝ նախապես նշելով, որ միեւնույն է, այս փուլում դատարանը դրանք այլեւս չի կարող կցել գործին:

Ս. Պ.

Կարմիր խաչը ռազմավարություն է մշակում

Երեկ Երեւանի դրամատիկ թատրոնում ընթացավ Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) 15-րդ համագումարը, որն ամփոփումն էր հնգամյա աշխատանքի:

Մայիսի 29-ին Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան, որը ներառում է 169 ազգային ընկերություններ, Ժենեւում լույս էր ընծայելու «Համաշխարհային աղետների ամփոփագիր. 1996» ամենամյա բաղարկման գիրք: 200 էջանոց այս հրատարակության մեջ վերլուծվում են սենյի (անապահովության եւ աղետների պատճառով սենյի հետ կապված բարդություններ) եւ բնակչության տեղաշարժի հարցերը (նշենական ինչ դժվարություններ են առաջանում պատերազմի, աղքատության, հեռաբնդման պատճառով տեղաշարժվող միլիոնավոր մարդկանց համար): Փախստականների եւ տեղահանվածների աջը, օգնության ծրագրերի սահմանափակ բյուջեն, հեղինեն զգալիորեն պակասող սնունդը ավելի են դժվարացնում մարդասիրական օգնություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքը: Ըստ ամփոփագրի կանխատեսումների, առաջիկա տասը տարիների ընթացքում կարձանագրվի բնակչության տեղաշարժի կրկնակի աճ, կնվազի օգնության բյուջեն, որն ամենաարագ սահմանին էր հասել 90-ական թթ. (3,4 միլիոն դոլար), մինչեւ 2005 թ. սենյի կարիքների աջը կկազմի 37,7 միլիոն տոնա: Կանխատեսվում է նաեւ անվերջանալի ճգնաժամ Ռուանդայում, սով Կոռեայի ԺՀ-ում, որ նույնիսկ խաղաղ պայմաններում կբարդանալին դժվարությունները նախկին Հարավսլավիայում: Հայաստանի մասին կանխատեսումներ ամփոփագրում չկան: Իսկ թե ինչ են մտածում այդ մասին մեզ մոտ՝ հետագայում առիթ կունենանք ծանոթացնելու: Ամփոփագիրը վերջում է ցույց տալ ինչպես ճիշտ դիմակայումը աղետներին կարող է ստեղծել վիկվածների միջոցով վերականգնման հնարավորություններ, առաջարկում է սենյի օգնության օգտագործման ավելի արդյունավետ ձեւեր: Սուղ միջոցներով ավելին անելու համար Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ազգային ընկերություններին առաջարկվում է բարձրացնել պրոֆեսիոնալիզմը, աշխատանքի որակը եւ արդյունավետությունը:

ՀԿԽԸ 15-րդ համագումարը հիմք ունենալով այս վերլուծությունները, մշակեց հետագա գործունեության ռազմավարական աշխատանքային ոլորտ: Փոփոխություններ մտցվեցին ընկերության կանոնադրության մեջ: Բաց քվեարկությամբ կրկին ՀԿԽԸ նախագահ ընտրվեց Աշոտ Սարգսյանը:

Ա. Գ.

Ցավակցություն

Խմբագրությունը ցավակցություն է հայտնում իր աշխատակից Կարինե Ղազարյանին հորեղբոր այրկա՝

ԱՆՆԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Ղեկավար եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ 562941, AT&T(3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / Հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՍՈՒԼ ԳՐԱՆԵԱՆ / Հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / Հեռ. 582863
A STYLE հանձնարարական
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊՈՒԵԼ ՍԱԼԱՖԵԱՆԻ
Apple Macintosh
հանձնարարական տարածքը
«Ազգ» թերթի
Տպումը «Ազգի» ոլորտային է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«Թուրքիա-Հայաստան հարաբերությունները ինչո՞ւ են այդքան կարեւոր»

1996 թ. մարտի 5-ին Ստամբուլում 6 հազար տարանակով լույս տեսավ թուրքերեն լեզվով հրատարակվող «Agos» (Ակոս) շաբաթաթերթը: Թերթը բաղկացած է 12 էջից, որից երկուսը հայերեն: Արտնայտերն է ողջտահայության շրջանում: Ծանոթ իրավաբան եւ հասարակական գործիչ Տիրան Պամբուկը: Պատրիարք Գարեգին Մրբազանը ողջունելով դարբերականի նորամուտը, այն կոչել է «Սուրբ Հաստի նվեր» եւ մաղթել, որ օգտակար լինի համայնքին: Գարեգին դատրիարքի դատգամում ասվում է. «Մամուլը հանրության ձայնն է եւ կենսական դեր ունի համայնքի կազմավորման մեջ: Պոլսահայ մամուլը մինչեւ այսօր իր օգտակար ծառայությունը բարունակեց եւ պետք է բարունակի»: Պոլսահայ համայնքի անդամներում մեծամասնությունը, հայերեն լեզվի վարժության անբավարարության դատճառով, դժբախտաբար, կարդալի հայ մամուլի հետեւելու հնարավոր մեկ դատակասը դիտի լրացնե»: Ստորեւ ներկայացնում ենք Անկարայի Աբաթուրի անվան համալսարանի դասախոս, սոցիալական գիտությունների դոկտոր Բասրն Օրանի «Թուրքիա-Հայաստան հարաբերությունները ինչու են այդքան կարեւոր» հոդվածի համառոտ թարգմանությունը, որը հայ-թուրքական հարաբերությունների առումով զգալի հետաքրքրություն է ներկայացնում: Գ. Ս.

ԽՍՀՄ-ը փլուզելուց հետո Արեւմուտքը կապիտալիստական տնտեսակարգի եւ մշակույթի բնորոշիչ սկսել է աշխարհն իրեն ենթարկելու գործընթացը: Անկախ մեր ցանկությունից, այժմ մենք բեւակոխել ենք այնպիսի ժամանակաշրջան, երբ «ազգային պետություն» եւ «ազգ» հասկացությունները սկսել են կորցնել իրենց իմաստը: Այսուհետեւ առաջնային կարեւորություն ձեռք կբերեն միայն այնպիսի հասկացություններ, որոնց բնորոշիչ կդարձվի միջազգային աբեւտուրը: Այժմ անդրադառնանք այն հարցին, թե այս դարագայում թուրք-հայկական հարաբերությունները ինչու են այդքան կարեւոր:

Ինչպես հայտնի է, 1917 թ. Ցարական Ռուսաստանի փլուզումից եւ ԽՍՀՄ կազմավորումից հետո մի կարճ ժամանակահատված գոյատեւած «Կովկասյան սեյմը» դժվարացրեց Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարության ԽՍՀՄ-ից օգնություն ստանալու հնարավորությունը, մի հանգամանք, որն Անկարային լուրջ ճգնաժամ մատնեց. Բայց, հակառակ դրան, 90-ական թվականների սկզբին ԽՍՀՄ փլուզման հետեւանքով ստեղծված Անդրկովկասի երկրների գոյությունը Անկարային բավականին հանգստություն դատճառեց, որովհետեւ այդ սարսափեցնող խորհրդային «արջի» հետ նախկին սահմանը գոյություն չուներ, Թուրքիան միանգամից դարձել էր նորանկախ թուրքական պետությունների առանցքային երկիր:

Եւ արդ, առանց երկար խոսելու կարելի է ասել, որ թուրք-հայկական հարաբերությունների կարեւորությունը հենց դրանով է դայմանավորված, իսկ դատճառը հետեւյալն է.

1) Կովկասյան երկրները ներքին հակասությունների հետ մեկտեղ (Ադրբեջանում էլչիբեյ-Ալիեւ հակամարտությունը, Վրաստանում Օսիայի, Աբխազիայի խնդիրները) ունեն նաեւ ազգային հարցեր (Նախիջեւանի հարցը հայ-ադրբեջանական դատճառով, Լեռնային Ղարաբաղի հարցը հայ-ադրբեջանական դատճառով): Իսկ Ռուսաստանը առանց այն էլ կովկասում եւ Միջին Ասիայում հանդես է գալիս Թուրքիայի թիվ մեկ մրցակիցը:

Երկրորդ ճանապարհը թե՛ երկար է, եւ թե Վրաստանի վիճակը լավ չէ:

Երրորդ ճանապարհը. Իրանը կովկասում համարվում է Թուրքիայի թիվ երկու ախոյանը եւ երկաթուղային կապի առումով միտ էլ դժվարություններ է հարուցում:

Չորրորդ ճանապարհը ամենակարճն է, բայց Հայաստանի հետ մեր սահմանային դարդասը փակ է եւ բացի դրանից չունենք նաեւ դիվանագիտական հարաբերություններ:

Ամբողջ հարցն էլ այն է, որ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման դեդքում կողմերից յուրաքանչյուրի համար էլ շատ հիմնահարցեր անմիջապես կլուծվեն:

ա) Հայաստանը տնտեսական ծանր կացության մեջ է եւ Տրապիզոնի նավահանգիստը օգտագործելու դեդքում կարող է աշխարհ դուրս գալ: Բացի դրանից, Թուրքիայի վրայով կարող է ԱՄՆ-ից ներդրումներ ստանալ: Հայաստանն այսօրվա դրությամբ միայն գինի եւ կոնյակ է արտադրում:

բ) Հայաստանը էներգետիկ ծանր ճգնաժամի մեջ է, այդ դատճառով կրկին գործարկեց իր կիսավեր առմային էլեկտրակայանը: Բայց եթե ադրբեջանական նավթն ու թուրքմենական բնական գազը Թուրքիա եւ եվրոդա հասցնելու ճանապարհին անցնեն Հայաստանի տարածքով, երկուսն էլ ճգնաժամից կդուրս գան եւ Հայաստանի համար նիսկ փող կվաստակի:

գ) Միաժամանակ կրթբեւանա ռուսական ռազմական ճնշումն ու Իրանի տնտեսական գերիշխանությունը:

Մեր դիվանագետներից մեկն ինձ հայտնեց, որ այդ մասին շատ դարզորոշ արտահայտվում են Հայաստանի դաշտոնական շրջանակները:

Թուրքիայի առումով. ա) Ամենակարճ ճանապարհով կիրականացվի թուրքական երկրների հետ անմիջական կապը: բ) Ադրբեջանական նավթի տեղափոխման համար նախատեսված Բաքու-Ջեյհան նավթամուղի եւ թուրքմենական բնական գազի տեղափոխման համար ամենավստահելի եւ ամենակարճ ճանապարհն է: գ) Սահմանային դարդասի բացման շնորհիվ թուրքական ապրանքների համար լայն շուկա կաղահովվի: դ) Թուրք-հայկական հարաբերությունների բարելավման շնորհիվ կփակվի դանդաղ գործողության ռումբի նմանվող Լեռնամորի առումնակայանը, եւ բացի դրանից Հայաստանին էլեկտրականություն կվաճառվի: ե) եւ ամենակարեւորը. Հայաստանը մի հիշ ոտի կանգնելու դեդքում կազատվի Իրանի եւ հատկապես Ռուսաստանի ազդեցությունից: Այսդիսով, կովկասում Ռուսաստանի ունեցած 2 ոտքերից մեկը կկտրվի:

Բայց եթե հաշվի առնենք Թուրքիայի եւ Հայաստանի անցյալի իրադարձությունները ու Լեռնային Ղարաբաղի հարցով հայ-ադրբեջանական հակամարտությունը, արդյոք թուրք-հայկական հարաբերությունների բարելավումը հնարավո՞ր է: Իմ կարծիքով հնարավոր է եւ այն էլ շատ:

Ինչպես վերը նշեցի, ժամանակակից տնտեսական հարաբերությունների շնորհիվ «ազգային» ու «ազգային զգացմունք» հասկացությունները հետզհետե երկրորդական դլան մղվելով, իրենց տեղը զիջում են «նյութական բարեկեցություն» հասկացությանը:

Պետք է նշել, որ Հայաստանը իրավիճակը ճիշտ է ըմբռնում: Այդ է վկայում այն փաստը, որ Տեր-Պետրոսյանը հարցին շատ իրատեսորեն մոտենալով նախ 1995 թ. հուլիսին նոր Սահմանադրությունից հանեց «ցեղասպանություն» արտահայտությունը, եւ ապա ազգայնական դաշնակցական կուսակցության գործունեությունը հարգական տակ դնելով, այդ կուսակցության ղեկավարներին դատի տվեց, իսկ այնուհետեւ այցելելով բազմաթիվ երկրներ, սփյուռքահայերի շրջանում Թուրքիային մերձենալու կոչեր ուղղեց:

Իրականում այսօր 2 երկրների մերձենալուն խանգարում է մի կարեւոր հանգամանք. Լեռնային Ղարաբաղի հարցը: Բայց դա անլուծելի՞ խնդիր չէ: ԵԱՀԿ Մինսկի խումբն այդ ուղղությամբ մեծ քանքեր է գործադրում: Մենք հուսով ենք, որ Լեռնային Ղարաբաղի հայերը գոռվալ ադրբեջանական տարածքները ետդով կլեն, իսկ Ադրբեջանն էլ իր հերթին կվերադարձնի Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը: Ամբողջ հարցն այն է, թե այդ երկուսից որն ավելի շատ կիրականացվի: Լավ կլիներ, որ այս հարցում Թուրքիան իր դերն ունենար:

Այժմ անդրադառնանք վերջին եւ ամենակարեւոր հարցին:

Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման շնորհիվ կբացավեն Թուրքիայում գոյություն ունեցող հայկական համայնքի վրա ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող հարձակումներն ու հայկական եկեղեցիների վրա մարդկային կողմնակի բախելու դեդքերը, հրադադարկից դուրս կգա «Ափոն հայ է» արտահայտությունը (խոսքը Արդուլլահ Օջալանի մասին է-Գ. Ս.): Այս փոփոխությունների շնորհիվ երկրի հայերը, որոնք օսմանյան ժամանակաշրջանում թուրքերից ավելի ընդդծված օսմանցի էին, այսօր էլ կինտեգրվեն թուրքական հասարակությանը: Ես նրանց հետ խոսել եմ, մեր հայերն էլ նույնն են ցանկանում եւ այդ հարցում շատ վճռական են: «Ակոս» լրագիրը այդ ճանապարհին ձեռնարկված առաջին քայլն է:

ԵՎՐՈՊԱ

Կիպրոսի խորհրդարանում կոմունիստները նոր տեղեր են ձեռք բերում

ՆԻԿՈՍԻԱ, 28 ՄԱՅԻՍ, ՋՈՐՋ ՏԵՐԲԱՐԵՎՈՒ: Մայիսի 26-ին Կիպրոսում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքների ամփոփումից հետո դարզվեց, որ տեղի կոմունիստական կուսակցությունը (ԱՔԵԼ) 56 հոգանոց խորհրդարանում ձեռք է բերել 14 աթոռ, ընդհանդ մոտենալով նախագահ Գլաֆկոս Քլերիդեսի «Դեմոկրատական Ճակատի» աջ կուսակցության արդյունքներին: Վերջինս խորհրդարանում կունենա 20 տեղ, մինչ կենտրոն ձախ Դեմոկրատական կուսակցությանը 10 տեղ: Սոցիալիստների ԷԴԵՔ կուսակցությանը դռավեց 5 տեղ, իսկ հանրաքվեության նախկին նախագահ Ջորջ Վասիլիսի Ազատ դեմոկրատներ 2:

Այսդիսով, ԱՔԵԼ-ը միակ կուսակցությունն է Կիպրոսում, որ նշանակալից կերդով ավելացրել է իր ներկայացուցիչների թիվը խորհրդարանում եւ դրանով իսկ ամբողջ Եվրոդայում միակ կոմունիստական կուսակցությունն է, որ ավելացրել է իր ուժը: Հատենայնդեդս, արժե նշել, որ Կիպրոսի կոմունիստներն այնքան էլ կարմիր չեն: Նրանք ավելի շատ հիշեցնում են «վարդագույն» ձախերին եւ շատ ավելի նվազ դոգմատիկ են, քան նեոկոմունիստները:

Այս առիթով հիշեցնենք, որ նույն օրդ տեղի ունեցած համայնքային ընտրություններում Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ էր ընտրվել Պետրոս Գալայճյանը, հավաքելով ձայների շուրջ 74 տոկոսը:

Իսպանիա. Ազնարը փորձում է կրճատել ծախսերը

Իսպանիայի նորընտիր վարչապետ Խոսե Մարիա Ազնարը փորձում է առանց ժամանակ կորցնելու առաջացնել երկրի տնտեսությունը եւ կրճատել գործազրկությունը, որի մակարդակով (22 տոկոս) Իսպանիան առաջին տեղն է գրաղեցնում Եվրոդայում: Կառավարության նոր ղեկավարի առաջնային նդատակը հասարակական լայն դաշինքի ստեղծումն է, որը թույլ կտար գրաղվածության հարցում տդահովել արհմիությունների եւ ձեռնարկատերերի հաշտությունը: Ազնարը հանդես է գալիս այդ երկխոսության նախաձեռնությամբ: Ի դեդ, «երկխոսություն» բառը նոր վարչակազմի կարգախոսներից է, որն իր գործունեության հենց սկզբում լայն իրազեկվածություն տրամադրեց Կատալոնիայի, որտեղի խորհրդարանում ձեռք բերի կտալոնցի ազգայնականների դիրքերը:

Սակայն արհմիությունների եւ ձեռնարկատերերի երկխոսությունը դժվար իրագործելի է, քանի որ մասնակից կողմերը խոսում են փաստորեն տարբեր լեզուներով: Ձեռնարկատերերի կոնֆեդերացիան ձգտում է մանավանդ «ճկունացնել աշխատանքի շուկան» եւ մասնավորապես նվազեցնել կրճատվող աշխատավորներին տրվող նպաստները, որոնք ամենաբարձրն են Եվրամիության տարածքում: Մինչդեռ արհմիութենական խոշոր կազմակերպությունները ուզում են առաջին հերթին կասեցնել երկրում ժամանակավոր զբաղվածության անցնելու միտումը (վերջին երկու տարիներին կնքված աշխատանքային նոր դայմանագրերի 80 տոկոսը ժամանակավոր է): Արհմիությունների վրա տարբ գնդոդի ազդեցություն գործեցին նոր կառավարության տնտեսական առաջին շատ միջոցառումները, մասնավորապես հանրային շահաբաշխիչ ձեռնարկությունների (հեռախոս, նավթ, գազ, էլեկտրականություն) սեփականաշնորհման ծրագիրը, դետական օժանդակության սպասող դարտերին (ածխարդյունաբերություն, նավաշինություն եւ այլն) տրվող հատկացումների կրճատումը: «Պատեն» հանդեսի տվյալներով, բյուջետային անմիջական կրճատումները կազմելու են 8,3 միլիարդ ֆրանկ, այսինքն 1996 թ. նախատեսված ծախսերի 0,7 տոկոսը: Այս միջոցառումներ նոր կառավարության խնայողությունների ծրագրի սկիզբն են միայն: Ազնարը հավաստիացնում է, թե «Սոցիալական հատկացումները չեն տուժելու» ծախսերի այս կրճատումներից: Սակայն իրականացիները գիտեն, որ նման դեդքերում զոհողություններ անդայման կլինեն: Դ. Բ.

ՊԵԿԻՆ

«Աղբային սպառնալի» Չինաստանում

Օրերս Չինաստանում սկսեցին բեկվեց այն քանից հետո, երբ Պեկինի մերձակա մի ամայուտում դատահաբար հայտնաբերվեց ԱՄՆ-ից բերված 640 տոննա աղբ: Մայրաքաղաքի իշխանությունների հատուկ կարգադրությամբ, այդ գործի հետաքննությամբ սկսեցին զբաղվել ի դարավարան մարմինների մի խումբ աշխատակիցներ: Նրանք դարզեցին, որ բեռն այստեղ է բերվել անցյալ տարվա աշնանը Կալիֆորնիայից: Հողի տակ խնամքով բաղված Լին «դլաստիկի հին փաթեթներ, դատարկ շշեր, օգտագործված բժշկական սրսկիչներ, դատռված ռեցեպտներ, ինչդես նաեւ անհայտ ծագման աղխտակ փոշի»:

Ավելին, հետաքննության ընթացքում դարզվեց, որ դա Չինաստան բերված աղբի առաջին խմբաքանակը չէ: Վերջին տվյալների համաձայն, միայն 1990 թ-ից այստեղ բերվել եւ զանազանաններում թաղվել է ավելի քան 127 հազար տոննա ամեն տեսակ աղբեղություն:

Չինական բերքերն ամեն օր հաղորդում են «աղբային սպառնալի» նորանոր մատուցմամբ: Տեղական հանրությունը դահանջում է խստորեն դատժել գործողության մասնակից մասնավորների եւ տրանսդորտային կազմակերպությունների աշխատակիցներին: Սակայն գլխավոր դատասխանատուն համարվում է ամերիկյան կողմը, որը, ինչդես գրում են բերքերը, այդ բաղերը կատարել է գիտակցաբար, թեեւ այժմ անհեղդակ է ծանում:

Հանրության դատահանդով ճնշված խումբը մտադիր է հասնել այն քանին, որ աղբը վերադարձվի ԱՄՆ: Համադատասխան փաստաթղթեր են դարկվել ամերիկյան ատյաններին:

«Աղբային գործը» ակնհայտորեն բաղաքական երանգ է ստացել: Հասկանալի է, որ տվյալ դեդքում զոհ բացված են ոչ միայն շրջակա միջավայրի դատասխանատուները, ոտնահարված է միլիարդանոց բնակչության ազգային հդարտության զգացումը: Չանգթանային լուսաբերյան միջոցները ամերիկացիների վարքագիծը համարում են անբարոյական եւ գիրիշխանական: Հասարակ չինացու աչքին Ռեյի Սեմի կերդարը բավական մրագնել է: Պարզվում է, որ նա ոչ թե բարի, այլ չարամիտ ծերուկ է, որն ուզում է մեծ տերությունը վերածել մեծ աղբանոցի:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Սեւ-սպիտակ, գունավոր ակնարքներ գեղարվեստ փնտրող ոսպնյակում

Մաֆս Առաքել Միվասյանի Երեւանում բացված անհատական ցուցահանդեսի մասին «Ազգն» օրերս փոքրիկ մի լուր տպագրեց. «Նուվել դ Ամենի» ամսագրի էջերից մեզ ծանոթ լուսանկարչի ոդոֆեսիոնալ մակարդակը հնարավորություն ընձեռել էր Կամերային թատրոնի Fe դասկերատան հրավիրել մեր թերթի ընթերցողներին. Ցուցահանդեսի բացմանը (մայիսի 25) նրա հետ երկար տարիների ժեռմություն ունեցողներն անգամ խոստովանեցին. որ մարդելահայ լուսանկարիչ Մաֆսին լավ չեն ճանաչել: Պատճառներից մեկը. կարծում եմ. նաեւ այն է. որ Մաֆսը արվեստի մասին ավելի քիչ է սիրում խոսել. փոխարենը չի փափաքում ակնարքը. եւ նրա մոտ 160 լուսանկարները կողք կողքի դիտելուց հետո կարող ես վստահ ասել՝ Մաֆսին երեւի թե էլի չեմ ճանաչում. մինչեւ չնայեմ նրա բոլոր գործերը: Իսկ դրանք բաս են ու տարբեր տարիների ներկայացվել են Ֆրանսիայի տարբեր քաղաքներում՝ Փարիզում. Մարսելում. Լիոնում...

աշխարհի տարբեր երկրներում իրագործելով մանկաց երազը իր երազանքը: 1978-ին Ամերիկայում իր մեջ հայտնաբերում է մի նոր զարեղ կիրք լուսանկարչությունը: «Հնդկաստանն իմ ընտրած երկիրն է» սեւ-սպիտակ շարք 1991-ի արդյունք է: 1992-ի սարեմին Դարաբար 2 ամսում ապրածն ու լուսանկարածը «ստիպում են» հակասերին կրկին զալ այդ աշխարհ. մասնակցել բազմաթիվ ճակատամարտերի (Շուշի. Մարակերտ. Ջաբրայիլ. Հադրութ. Խոջալու. Գալուջա): 1993-ի մարտին Մադրասում ծանր վիրավորվում է. վիրահատություն կրում: Սպիտակ Ֆրանսիա դնացած Մաֆսն օդուստին արդեն Հայաստանում էր: Մինչեւ հուդարարը (1994-ի մայիս) Մաֆսը եղավ Մարակերտի շրջանի սահմանյան մասում Գալուջայում տեղի ունեցող վերջին գործողությունների ականատես: 1992-ի սարեմից մինչեւ 1994-ի մայիս (շարջ 10 հազար դիապոզիտիվ) Լաչինում արված լուսանկարներից ցուցահանդեսում ներկայացվում է 44 գրանցված նկար Հնդկաստանին նվիրված 117 լուսանկարի հետ:

Նախ լուսանկարները բախկանաչի մատուցանելի դարձնող էստրոֆիայի մասին: Ցուցակիցներս չդժգոհեցին, ավելի ճիշտ բարձր դոդենսիոնալիզմի դիրքից դժգոհություն արձանագրեց միայն հեղինակ Գարեգին Զաքոյանը. «Ամենամեծ թերությունն արդեն. ժամանակը ինչ էր»: Որ լուսանկարները առաստաղից կախված լինեին. կամ դարաբաղյան շարքը ոսկեմայլ շրջանակներում չլինեին. ինչ խոսք. ավելի լավ կլուսանկարներում. բայց դարաբաղյան շրջանակները «փոփոխվում» են - Գ. Զ.: Բայց 1000 դոլլարից ավել

նավոր են», ասում է Մաֆսը: Սեւ-սպիտակի մեջ Մաֆսի նկատած ակնարքները հնարավոր ընդգծումներ ունեն: Գեղագիտի դիտողունակություն ամեն ինչին նայելիս. նույնիսկ. երբ դարաբաղյան շարք է ներկայացնում: «Մարդկային գավ» խորագիրն ընդհանուր դիալեկտիկան մի բան է դառնում; անգամ երբ ուզիր դիտում ես դարաբաղյան շարքը: Լուսանկարչություն դասավանդող կինոռեժիսոր Այբերս Յավորյանն ընդգծում է. որ չնայած այդ շարքին վերադահված քոնիկ կամ վավերագրական լինելուն, տեսանելի է Մաֆսի ոչ այնքան լուսագրի վերաբերմունքը. որքան հայ մարդու. որին գտնվում է նաեւ եվրոպացու կոլտուրան: Նույնն է ասում Գարեգին Զաքոյանը «Մաֆսը զինվորական դարվեսը. առաջարկում է համագործակցել: Հայդիկի նկարիչ բեմադրող Միհայել Անտոնյանն էլ չի թաքցնում ուրախությունը. Մաֆսի դարաբաղյան թեման նոր «անտվոր լավ» տեսությանն արդյունք է: Ազգային ֆիլմադարանի տնօրեն Գարեգին Զաքոյանի ասելով. դարաբաղյան ռեպորտաժային լուսանկարներում հետամ է. որ նկարիչը հայ է: Հնդկաստանը. բնականաբար. որիշ է. ճանապարհորդի ու դոդենսիոնալի կարողություններ հաշվի են առնվել: Արմենդրեսի 20 տարվա փորձ ունեցող նորությունների լուսանկարիչ Ռոբերն Աբրյանը. որ Մաֆսի հետ երկար տարիների բարեկամություն ունի. հիացած է ցուցահանդեսով: «Շատ լավ եմ դասկերացնում. թե ինչ սոսկալի աշխատանք է կատարված. քանի տասնյակ հազար նեգատիվներից է ընտրվել ցուցադրված այս քանակը»:

Զավեն Խաչիկյանը բացման հանդիսավոր «աղմուկից» հետո է նայում ցուցահանդեսը: Նրա համար դիտումը «խանգարում» եմ եմ: «Լավ ցուցահանդես է: Մաֆսը բախտավոր է. Արմենդրեսում աշխատելով այսքան բան չի կարող անել»:

Fe դասկերատահում ընդունված կարգ է. ցուցահանդեսը բացվում է ժամադիենը կտրվելուց հետո: Մաֆս Միվասյանի ցուցահանդեսի ժամադիենին գրված է «Կլարա Ցետկինի Ֆեստիվալ»: Առանցքային դեր կաղ մի փեստիվ: Իսկ զարմանք հարուցում է ոչ թե հետաքրքիր անցյալում ընկղմահարվող անվան հիշողությունը. այլ բարձր դոդենսիոնալիզմը. որ կա դեռեւ մեկի արվեստագիտությունը. որ Մաֆսի աշխատանքներում:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հրավառության աստղածաղիկները մեր հիշողության մեջ երկար կմնան

Անկախության օրվա շրջանակներում «Բրաբիոն ֆլորա սերվիսի» հերթական միջոցառումը «Բրաբիոնը՝ մանկության ծաղիկ» տոնահանդեսն էր, որը կայացավ մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում. այնտեղ հավաքելով մեծ ու փոքր ծով բազմություն: Հրապարակը վաղուց կարոտել էր էլեբրերի, որն այս անգամ ընդունում էին տիրունայում կանգնած Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության արվեստագետները: Գրանիտե դաստականդանը եւ տիրունան զարդարվել էին օդապարիկների բազմագույն շղթաներով, որոնց հեղինակները հրավիրված էին ՈՂ-ից: Տոնահանդեսի ազդարարումից հետո բազմաթիվ Դիոնիսոսներ կամ Բաքոսներ, ծաղիկներով ու մրգերով զարդարուն փոքրիկ մինուդների ու սատիրների ուղեկցությամբ, երկնքի կամքի գավաթներով, փոքրիկ նեղբերան կժերով ու եղջյուրներով գինի էին մատակարարում հյուրերին: Սակայն երկնքում հայտնվեց ուղղաթիռը, որ ավանդույթ դարձող սովորությամբ ամեն ոյուրին ոսկե աստղեր, լուսիններ, օդապարիկներ ու տոնահանդեսի խորհրդանշանով բռուցիկներ էր «տեղում» հավաքածների վրա: Գեղեցիկ տոն էր, եւ խորը նայելիս ակնհայտ էր՝ որքան միջոցներ են ծախսվել: Ուստի զարմանալի էր, ինչո՞ւ տոնահանդեսի ա-

ռանցքը կազմող մեծենաներով երբը. որ ներկայացնում էր Հայաստանի բոլոր գավառները. մեղմ ասած. արեւելքի ոչ լավագույն ընտրությամբ գույներն ու ճաշակն էր հիշեցնում: Գնկա հրապարակը ողողվել էր աննեղաշն ու անլույս խնդությամբ. որին երբեմն մաս էին կազմում եղույթ ունեցողները:

Ընդամենը երկու օր առաջ բացված «Բրաբիոն էլիտա սերվիս» սրահում (այդ մասին մայիսի 28-ի «Ազգում») ներկայացված ֆիտոդիզայնի աշխատանքները հուսադրող երանգ էին դարունակում. որ «Բրաբիոնը» ձերբազատվում է զանգվածային ճաշակին տուրք տալու դարտադրվածությունից: (Ի դեպ. իմ մասնավոր կարծիքով. նախորդ օրերին սրահի առթեւ դրված արձանները ներսում ավելի մեղմ էին դիտվում. եւ հարկ չկա դրանք կրկին դուրս բերել):

Երեկոն մութի հետ ծածկեց ամեն ինչ. առա հրավառությունը. հրաբալի հրավառությունը. որդիսին նույնիսկ հեռուստատեսությամբ հագվադեղ եմ աթիթ ունեցել տեսնել. ջնջեց տխուր տրամադրությունները: Սակայն կուզեի. որ հաջորդ տարիներին «Բրաբիոնի» հյուրերն այլեւս հոգեած-ճանձրացած հայացքներ չունենային. որ «զանգվածների» մեջ կարիք առ կարիք լվեր գեղեցիկը. եւ հսկայական ծերմակ փուչիկն ու մյուս բոլոր փուչիկները դատա-դատա արվելու փոխարեն գորովանքով դահիվեին որդես հուբ:

ԱՆՈՒՇ ԳԱԼԱՍՅԱՆ

ՕՈՒՇԱՀԱՆԴԵՍ

«Հայաստան. Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ քաղաքակրթության 3000 տարին»

Հունիսի 12-ին Ֆրանսիայի Ազգային գրադարանում այս վերնագրով լայնընդգրկուն մի ցուցահանդես դիտի բացվի. որտեղ ներկայացվելու են Մատենադարանի 54 ձեռագիր. Հայաստանի դատմության դեսական բանգարանից տարբեր արժեքավոր առարկաներ. կենցաղային իրեր: Ֆրանսիայի Նանտ քաղաքի Դորբե բանգարանում ներկայացվող Հայաստան աշխարհի մյուս գանձերն էլ կմնան Հայաստանից երեկ տեղափոխված այդ ցուցանմուշներին: Ինչպես մեզ տեղեկացրեց ՀԲԸՄ Փարիզի գրասենյակի աշխատակից Խաչիկ Մարտիրոսյանը. ցուցահանդեսի կոմիսարն է ՀԲԸՄ-ի ներկայացուցիչ Ռայմոն (Հարություն) Գեւորգյանը: Ցուցահանդեսի կազմակերդումը նոդասել է Կոդ Սուրբաֆյանը: ՀԲԸՄ-ի հովանավորությամբ տարիներ առաջ ծնունդ առած այս ցուցահանդեսին. որ տեւում է մինչեւ հոկտեմբերի 30-ը. մասնակցում է մշակույթի. սդորտի. երիտասարդության հարցերի նախարարությունը: Հրավիրյալների մեծ խանգը «դարտադրել» է. որ ցուցահանդեսի հանդիսավոր բացումը երկու օր առաջ: Հունիսի 12-ի բացմանը ներկա կլինի նախագահ ժակ Շիրակը: Սեկ օր առաջ կժամանի Հ3 նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Բացման հանդիսավոր արարողություններին ներկա կլինեն քաղաքական գործիչներ. դիվանագետներ. Ֆրանսիայում Հ3 դեսդանասան աշխատողներ. ՀԲԸՄ անդամներ: 190 միլիոն ֆրանկ արժողությամբ ազգային հարստություն ներկայացնող իրերն ունեն անձնագիր. իսկ արդահովագրությունն իրականացրել է UAP կազմակերդությունը: Տեղափոխման աշխատանքով զբաղվում է «ANDRE CHENUE» կազմակերդությունը: Նրա անդամ երկու Ֆրանսիացիներն ու ՀԲԸՄ ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը երեկ իրենց զարմանքն էին հայտնում. թե մայիսի 29-ի գիշերը տեղափոխվող արժեքներն ինչդե՞ս դիտի մի քանի ժամում ակդներից հանվեն եւ անհրաժեշտ մասային ծառայությունն անցնեն: Սդոդ հնարավոր չէ՞ր կարեւորագույն այդ գործն ավելի շուտ կազմակերդել:

Ա. Հ.

Կարվարենցին ներկայացրեց «Հայաստան-Ֆրանսիա» ընկերությունը

ժորժ Կարվարենց. բազմաթիվ երգերի (շանսոնների). ավելի քան 150 ֆիլմերի երաժշտության հեղինակ: Նրա երգերը կատարել են ֆրանսիական լավագույն շանսոնյեները՝ Ազնավուր. Բեկո. ժ. Ֆրանսուա. Հեկերի. Դաշիս. Մարդ Ռուշկներ. ժանրային ճեղանկարներ. բալլադային տիպի. երբեմն՝ 9-10 ռոմբանոց «երկարաունչ» երգային-մեղեդային. բարձր դոդենսիոնալիզմով հարուստ երգադնակով ստեղծված. զգացմունքային մեղեդիներ. մեղաբնակ նվագախմբային երկեր. արվեստագիտության բեկնածու Անա Արեւշատյանն այսդես բնութագրեց Կարվարենցի ստեղծագործությունը՝ երեկ արտասահմանյան երկրների հետ հանդարծակցության եւ մշակութային կադերի հայկական ընկերությունում անցկացված ցերեկույթի ընթացքում. որ սփյուռքահայ ճանաչված երգահանի հիշատակին էր նվիրել «Հայաստան-Ֆրանսիա» ընկերությունը: Տիկին Արեւշատյանը արգասավոր եւ. ինչ-որ տեղ ճակատագրական նկատեց «Ազնավուր-Կարվարենց երգանիկ տանդեմը». որ. հիմում ունենալով Պիդա Ազնավուրյան-Կարվարենց «ընտանեկան» միությունը. ծնունդ տվեց Ֆրանսիայի երաժիշտների համագործակցությամբ ստեղծված հրաշալի երգերի. որոնցից ամենաուրախն անգամ. ինչդես ասել է ինքը՝ Կարվարենցը. արեւելյան բախիծ է կրում. բնական երեւույթ ժամանակի երեւելի հայ մտավորականներից մեկի՝ մանկավարժ. հասարակական գործիչ. բանաստեղծ (4 գրքերի հեղինակ). բարգմանիչ Գեւորգ Կարվարենցի ընտանիքում հայկականության հիմնական դասեր առած Կոմիտասի. Ավետ Նովայի. Խաչատրյանի երաժշտության սնված երիտասարդի ստեղծագործության համար: Նշանակալից նկատվեց Կարվարենցի կինոերաժշտությունը. հատկապես ամերիկյան կինոբեմադրիչների հետ համագործակցությունը (Կարվարենցի կինոերաժշտությանը մեր հանդիսատեսը ծանոթ է «Ճանապարհը փաստեր», «Երկնային անդորդ», «Սատանան եւ 10 դատվիրանները. «Մարկո Պոլո», «Թեհրան-43» ֆիլմերից): Ազնավուրի եւ Կարվարենցի հետ փարիզյան եւ հայաստանյան իր հանդիսությունների մասին դատմեց Հայաստան-Ֆրանսիա ընկերության վարչության նախագահ Ռուբեն Սահակյանը. մասնավորապես անդրադառնալով 88-ի երկրաշարժից հետո Հայաստան. Գյումրի կատարած նրանց այցելությանը. որի արդյունքն եղավ Ազնավուրի խոսքերով եւ Կարվարենցի երաժշտությամբ գրված. բարության. հույսի եւ բարեկամության խորհուրդ եւ խորհրդանիշ դարձած «Ընդ համար. Հայաստան» երգը: Ցուցադրվեցին երաժիշտների կյանքի կարեւոր դրվագներին առնչվող լուսանկարներ. Ազնավուրի մոտ՝ Միդա Ազնավուրյանի «Petit frère» («Ավարիկս») գրքից հատվածներ կարդացին Դրյուսով մանկավարժական ինստիտուտի ուսանողները:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

Ազնավուրյանի ուխտագնացությունը մշակութային կենտրոն հիմնեց

Արդեն հայաստանյան ինքնությունը հաստատելու ցանկությամբ. ոչ միայն Գյումրի. ինչպես նաեւ Ալեքսանդրապոլ. Ազնավուրը ցանկացավ ունենալ մի տարածք. որտեղ ինքը. ինչպես ասաց. կարող է ազատորեն շնչել: Ինչպես հայտնեցին. ոչ թե հեռավոր անցյալում բնակահարվող անվան հիշողությունը. այլ բարձր դոդենսիոնալիզմը. որ կա դեռեւ մեկի արվեստագիտությունը. որ Գյումրի կատարած ուխտագնացության ընդացքում ժողովրդի կողմից հավանված գումարների հաշվին հիմնվել եւ ավելի քան 4 տարի գործում են Գյումրիի մշակութային կենտրոնի սիմֆոնիկ եւ փողային նվագախմբերը. երգչախումբը. ժողովրդական դարի խումբը. տեղի հեռուստատարությունը եւ այլն: Նույն գումարների եւ ՀԲԸՄ գործնական օգնության շնորհիվ այժմ ավարտին է մոտենում Գյումրիի արվեստի ակադեմիայի շինարարությունը եւ հնարավոր է դարձել սեդտեմբերին սկսել առաջին ուսումնական տարին: Այդ իրադարձությանն արժանավայել նշելու համար Հայաստանի Ֆիլիարմոնիկ նվագախմբի ղեկավարությամբ կազմակերդվեցին. որ ՀՅԴ-օրերս մի շարք միջոցառումներ է իրականացնելու: 1991 թ. Գյումրի կատարած ուխտագնացության ընդացքում ժողովրդի կողմից հավանված գումարների հաշվին հիմնվել եւ ավելի քան 4 տարի գործում են Գյումրիի մշակութային կենտրոնի սիմֆոնիկ եւ փողային նվագախմբերը. երգչախումբը. ժողովրդական դարի խումբը. տեղի հեռուստատարությունը եւ այլն: Նույն գումարների եւ ՀԲԸՄ գործնական օգնության շնորհիվ այժմ ավարտին է մոտենում Գյումրիի արվեստի ակադեմիայի շինարարությունը եւ հնարավոր է դարձել սեդտեմբերին սկսել առաջին ուսումնական տարին: Այդ իրադարձությանն արժանավայել նշելու համար Հայաստանի Ֆիլիարմոնիկ նվագախումբը. հունիսի 2-ին. ժամը 17.00-19.30-ը Առամ Խաչատրյան Ֆիլհարմոնիկ սրահում կազմակերդվում է տնական համերգ մասդոն սիմֆոնիկ նվագախմբի եւ երգչախմբի մասնակցությամբ: Կխաղարկվեն բան կարմեմ իրեր: Հունիսի 7-ին. ժամը 17.00-ին «Հրազդան» մարզադաշտում կազմակերդվում է ընկերական հանդիպում Հայաստանի ֆուտբոլի վետերանների հավաքականի եւ Հայաստանի Ֆիլիարմոնիկ նվագախմբի ֆուտբոլի թիմերի միջեւ: Այս անգամ մասնատ Ազնավուրյանին կհանդիպի դարդասադահի դերում: Հունիսի 9-ին Գյումրիում տեղի կունենան հանդիսություններ. կմասնակցեն ՀՅԴ-ի երգչախումբը. Գյումրիի արվեստի կենտրոնի խմբերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հինգշաբթի՝ մայիսի 30-ին. ժամը 18-ին. Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում (Արովյան 2) տեղի կունենա

ԽՊԽՆԱ ՋՊՔԽՅԱՆԻ (սոդրանո)

մենահամերգը

Դաշնամուրի վրա նվագակցում է Անահիտ Քոչարյանը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Սիրուտ-հայրենիք

ԵԿԵՂԵՑԻ

Արքալոյս միտոնի օրհնութիւն Անթիլիասի մայրավանքին մէջ

Դարերու խորէն եկող առանդը անգամ մը ևս բաբախուեցաւ համայն հայ ժողովուրդին գաւակներուն, երբ Կիրակի 26 մայիս 1996-ին Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Առամ Ա Կարոյենկոսի ձեռամբ արքալոյս միտոնը օրհնուեցաւ Կիլիկիոյ մայրավանքին մէջ, Անթիլիաս:

Օրհնութենէն օր մը առաջ, որպէս նախապատրաստութիւն հայ եկեղեցոյ ամենէն նուիրական եւ շնորհազեղուն արարողութեան, Մայր տաճարին մէջ երեկոյեան ժամը 7-ին կատարուեցաւ հսկումի ժամերգութիւն: Ինքնին խոկումի պահ մը եղաւ այս ժամերգութիւնը իբրեւ նախասօնակը յաջորդ մեծ օրուան:

Կիրակի առաւօտ, հայ հաւատացեալ ժողովրդեան հոսքը սկսաւ դէպի Անթիլիաս: Անցնող շաբաթուան ընթացքին բազմաթիւ ոգեւորներ եւս հասած էին Լիբանան Սուրիոյ զանազան քաղաքներէն, Պարսկաստանէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եւ Կանադայէն, Կիպրոսէն, Յունաստանէն, Հարաւային Ամերիկայէն եւ հեռաւոր Աւստրալիայէն, մասնակից դառնալու այս մեծ օրուան, որու խորին խորհուրդը սերունդէ սերունդ կը փոխանցուի անընդհատ ոգեւորութեամբ մը:

Ժամը 9:30-ին հոգեւորականաց շքեղ բաժիրը, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, ծայր առաւ Վեհարանէն եւ երկարեցաւ մինչեւ Մայր տաճար, որու առաջ դիմաւորուած լայն բեմին վրայ տեղի պիտի ունենար միտոնօրհնութեան արարողութիւնը: Թափորին առջեւէն կ'ընթանար խաչը, որու կը յաջորդէին Լուսաւորչի սուրբ նշխարաւոր հայրապետական զգեստներ, խաչվառներ, Գառն Աստուծոյ, Կիլիկիոյ հին միտոնի սրուակը, Ս. Էջմիածնէն բերուած միտոնի սրուակը, բալասանի սրուակը, Ս. Գրիգոր Լուսաւորչի աջը եւ այլ արքական մասունքներ պարունակող գեղակերտ ու պատկանական արկղը, որուն ետեւէն կ'երթայր ծիրանեգոյն ամոիովանին, որու ներքեւ կը յառաջանար Կիլիկիոյ Հայոց Հայրապետը, շրջապատուած արքեպիսկոպոսներով ու եպիսկոպոսներով, որոնք պատարագիչի իրենց հանդերձանքով իր գագաթնակէտին կը հասցնէին բաժիրի շքեղութիւնը:

Սուրբ միտոնի օրհնութիւնը անգամ մը եւս առիթ հանդիսացաւ Հայաստանեայց մի եւ անբաժանելի Եկեղեցոյ միութեան եւ մէկութեան արտայայտութեան, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին հետեւով միտոնօրհնութեան այս արքական, արարողութեան մաս կազմեցին Հայաստանեայց Եկեղեցոյ նուիրապետական բոլոր Աթոռներու գահակալներուն ներկայացուցիչներ: Ս. Էջմիածնի Մայր աթոռը կը ներկայացնէին Գերշ. Տ. Գիս արք. Նազգաշեան (Հայրապետական ղեկավարակ եւ առաջնորդ հնոց Փարիզի) եւ Գերշ. Տ. Գարեգին արք. Ներսիսեան (Առաջնորդական փոխանորդ Արարատեան հայրապետական թեմին): Երուսաղէմի Պատրիարքութիւնը կը ներկայացնէր Գերշ. Տ. Տաճատ եպս. Թոսիպեան (Առաջնորդ հնոց Յորդանանի թեմին), իսկ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը կը ներկայացնէր Գերշ. Տ. Շահան արք. Սվաճեան:

Յընթացս սուրբ եւ անմահ զոհաբերութեան, Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետը տուաւ իր հայրապետական պատգամը Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթասաց բառերով ըսելով. «Տէր, օրհնէ մեզ այս իղով եւ իր զօրութեամբ. այս իղով փրկութիւն կատարէ եւ քաւութիւն տուր, բժշկութիւն պարգեւէ եւ շնորհք զգեցուր»:

«Ժողովուրդ հայոց, մէկ է հայն միտոնը: Մենք երկու միտոն չունինք, չունեցանք երբեք ու պիտի չունենանք երբեք: Այս միտոնին մէջ կայ Ս. Էջմիածնի միտոնը ու Ս. Էջմիածնի միտոնին մէջ կայ Կիլիկեան միտոնը: Ահա փաստականը հայ ժողովուրդի միութեան ու աղբիւրը հայ ժողովուրդի յաւերժութեան: Այս միտոնը հայուն միայն կը պատկանի: Ան Աստուծոյ գնորդոյն պարգեւն է տրուած հայուն»:

Վեհափառ Հայրապետի հարազն անմիջապէս ետք, Գարեգին արք. Ներսիսեան կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջոյնի խօսքը, յուզումով լիցքակելով այնտեղ, որ Ինք ալ իբրեւ նախկին Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, բախտ ունեցած է երկու անգամ օրհնելու Ս. միտոնը Անթիլիասի նուիրականացեալ հողին վրայ. «Սուրբ միտոնը Աստուծոյ կնիքն է հայութեան նկարագրին վրայ. Սուրբ հոգւոյն խորհրդագործ ոյժն է ան մեր ժողովուրդի կեանքին մէջ: Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցոյ բոլոր զաւակներն անխտիր, անով կը գտնեն իրենց հոգեւոր ներին միութիւնն ու զօրութիւնը» կը գրէր Վեհափառը իր ուղարկած պատգամին մէջ:

Սուրբ պատարագը շարունակուեցաւ մինչեւ առաւօտ, որու խառնաձայն երգեցողութիւնը կը կատարէր կաթողիկոսարանիս «Շնորհալի» երգչախումբը, ղեկավարութեամբ Մեղրիկ Վրդ. Բարիճեանի:

Պատարագի առաջին, դարձեալ կազմուեցաւ հայրապետական շքեղ բաժիրը, որ «Ամէն հայի սրտից թանկ» հայրապետական մաղթերգով առաջնորդեց Վեհափառ Հայրապետը դէպի Վեհարան, որու մուտքին հնչեցին «Կիլիկիա»-ն, «Ի վեր բարձանց» Կիլիկեան հայրապետներու մաղթերգը եւ «Մեր հայրենիք» Հայաստանի Հանրապետութեան քայլերգը: Վեհափառ Հայրապետը Պահոցանիով անցաւ մը եւս օրհնեց հաւատացեալ եւ հաւատարիմ հայորդիներ, որոնք այլազան երկիներէ փութացեր էին Անթիլիաս պատմական այս օրուան մասնակից դառնալու:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՉԻՖԹԵԼԻՆ
Կիրակի, 26 մայիս 1996
Միտոնօրհնէք, Անթիլիաս
(Լուսանկարներով)



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ

Միացեալ հայկական ֆոնդը 175000 դոլլար կը յատկացնէ Հայաստանի մանկական արտաքնական կեդրոնին

ԳԼԵՆԴԷՅԼ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ: Միացեալ հայկական ֆոնդը որոշեց այս տարի եւս օժանդակել Հայաստանի մանկական արտաքնական կեդրոնին 175000 դոլլար յատկացնելով 200 յաւելեալ վիրաբուժութիւններու համար:

1993-էն ասդին, ֆոնդը 450000 դոլլար յատկացուցած է արտաքնական կեդրոնին, որ կը գտնուի Երեւանի երկրորդ մանկական հիւանդանոցին մէջ: Ֆոնդը նաեւ փոխադրած է աւելի քան 1 միլիոն դոլլար արժողութեամբ դեղորայք եւ վիրաբուժական կազմածներ արտաքնական կեդրոն, որ անցնող երեք տարիներու ընթացքին 500 սրտի վիրաբուժումներ կատարուած են:

Սրտի վիրահատութեան բժիշկ Յակոբ Յովակիմեան, Փորլենդ Օրեգընէն, այս շաբաթ կը մեկնի Հայաստան, ուր իր գլխաւորութեամբ, տեղացի բժիշկներու խումբ մը այդ 200 ծրագրուած վիրաբուժումները պիտի կատարէ: Անցեալ տարիներու նման, ան վեց ամիս կանգնոր պիտի աշխատի արտաքնական կեդրոնի վրայ: Իրեն կ'ուղեկցի Սիմոնէ Ֆաղաֆեն մանուկներու արտաքնաբան բժիշկ Հրայր Կարապետեանը: Արտաքնական կեդրոնի անձնակազմը, որ կը բաղկանայ 58 տեղացիներէ, այժմ կարող է առանձին սրտի բարդ վիրահատումներ կատարել, ամերիկահայ մասնագէտներու բացակայութեան ընթացքին:

«Հայաստանի մանկական արտաքնական կեդրոնի նպատակն է սրտի բերութիւններ ունեցող երեխաներուն ախտաճանաչումը ընել ու զանոնք խնամել դեղերով եւ վիրահատութեամբ, զարգացած երկիրներու մէջ կիրառկուող ամենայառաջադէմ միջոցներով», ըսաւ բժիշկ Յովակիմեան: Արտաքնական կեդրոնը կը ծգտի ըլլալ եզակի բժշկական վայր մը, ուր սրտի ի ծնէ թերութեանց բարդ պարագաներու համար այնպիսի մասնագիտական ախտաճանաչ կը կատարուի, որ գոյութիւն չունի տարածաշրջանի այլ երկիրներու մէջ:

«Հայաստանի մէջ ամէն տարի շուրջ 400 երեխաներ սրտի թերութիւններով կը ծնին: Անոնց կէսը վիրահատական միջամտութեան կը կարոտի, մինչ միւս կէսը պէտք ունի բժշկական ախտաճանաչումի եւ խնամքի», ըսաւ բժիշկ Յովակիմեան: «Եթէ անմիջական խնամք չտանան, այդ երեխաներուն մեծ մասը պէտք պիտի ունենայ ետ սուղ եւ երկարատեւ բժշկական խնամքի ու պիտի մահանայ նախքան չափահաս տարիքի հասնիլը»:

Արքանեակ երեք բուժկեդրոններ հաստատուած են Գիւմրիի, Գորիսի եւ Վանաձորի մէջ: Տեղւոյն սրտի մասնագէտները կը կատարեն հիւանդներու նախնական ախտաճանաչումը եւ հետեւողական խնամք կը տանին անոնց, որոնք երեւանի կեդրոնին մէջ վիրաբուժութեան ենթարկուած են: Շրջանային արքանեակ այդ բուժկեդրոններուն շնորհիւ, հեռաւոր քաղաքներ առաջոր հիւանդները պէտք չեն ունենար դէպի երեւան ծախսալից ու ժամանակ խլող ճանապարհորդութիւններ կատարել: Սարատովի, Գորիսի սրտի մասնագէտը պարբերաբար Դարաքաղ կ'այցելէ եւ գործողութեան յատուկ պարագաները կը յղէ երեւանի կեդրոնին:

Իր հիմնադրութենէն 1989-էն ի վեր, Միացեալ հայկական ֆոնդը Հայաստան ուղարկած է 137 միլիոն դոլլար արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն, 83 բոյիլերով եւ ծովային 144 բեռնարկղերով:

Միացեալ հայկական ֆոնդը հաւատական ջանքն է Հայկական բարեգործական ընդհանուր միութեան, Ամերիկայի Հայ աւետարանական ընկերակցութեան, Հայ օգնութեան միութեան, Ամերիկայի հայկական համախմբումին, Ամերիկայի Հայց. եկեղեցոյ առաջնորդարանին, Լինսի հիմնարկին եւ Ամերիկայի Հայ առաքելական եկեղեցոյ առաջնորդարանին:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել Միացեալ հայկական ֆոնդի գրասենեակը՝ (818) 241-8900:

ԱՐՑԱԽ

Ստեփանակերտի օդակայաններ գրասարը կբարելաւի գրամատակարարումը

ԼՂՀ մայրաքաղաքի գրամատակարարումը բարելաւելու նպատակով Ստեփանակերտում կառուցվում է օդակայաններ գրասար: Մայիսի 1-ի տվյալներով, արդեն կատարված է 20 միլիոն 547 հազար դրամի աշխատանք, որի շնորհիվ տեղադրվել է 2159 մետր խողովակաշար: Աշխատանքները ներկայումս ընթանում են մայրաքաղաքի Մարտի փողոցում: Օդակայաններ գրասարի կառուցմանն ուղղված աշխատանքները կավարտվեն 1997-ի սկզբներին:

Անհաս ձեռներեցներին եւ պետական ձեռնարկություններին՝ լիցենզիաներ

Ստեփանակերտի քաղաքային վարչակազմից տեղեկանում ենք, որ անցյալ տարվա օգոստոսի 1-ից տնտեսական գործունեության առանձին տեսակներով զբաղվելու համար (օրինակ, հասարակական սննդի կազմակերպում, արդյունաբերական արտադրանքների վաճառք, պարենամթերքի մանրածախ առեւտուր, ոչ ոգելից խմիչքների վաճառք, ուղեւորների եւ բեռների վճարովի փոխադրումներ եւ այլն) վարչակազմը 813 հատուկ թույլտվություն-լիցենզիա է հատկացրել անհաս ձեռներեցներին եւ ոչ պետական ձեռնարկություններին: Լիցենզիա ստացողների մեջ մեծ թիվ են կազմում պարենամթերքի վաճառով զբաղվողները:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Բողոքում է կեղծ «Ազգում» տպագրված հոդվածի հեղինակը

Բեյրութում հրատարակվող «Զարթօնք» թերթի 1996 թ. ապրիլի 12-ի համարում տպագրել էի արցախյան պատերազմի հերոսներից մեկի Ռաֆիկ Պետրոսյանի անտիպ հուշերից մի հատված «Անակնկալ հանդիպում Նախիջեւանում» վերնագրով, որին կցել էի մի փոքրիկ առաջաբան: Վերջերս զարմանքով իմացա, որ 1996 թ. մայիսի 7-ին «Ազգ» թերթը կրճատումներով (բաց է թողնված 43 տող) արտատպել է այդ առաջաբանը՝ պնդում չիմանալով վերնագիրը: Բանն այն է, որ «Զարթօնքում» այն խորագրված էր՝ «Էջեր արցախյան պատերազմի հերոս Ռաֆիկ Պետրոսյանի անտիպ հուշերից», որից հետո գալիս էին այդ «Էջերը ...», այսինքն հուշագրության: «Ազգի» մեջ ստացվել է անհեթեթություն. գրված է «Էջեր...», բայց այդ «Էջերը» բացակայում են:

Միաժամանակ կուզենայի նշել, որ ինձ համար անդաստաբար կլիներ հոդված կամ որեւէ նյութ տպագրել աղօրինի ճանապարհով «Ազգը» զրկած անձանց ձեռքով հրատարակվող մի լրագրի մեջ, որը իրավունք ունենալ ստացել իրեն մեզանում սպասել իրեն մեզանում հանդարտասիրանոց «Կեղծ Ազգ» անունը եւ այդպես էլ կմնի հայ լրագրության պատմության մեջ:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Պատմական գիտությունների դոկտոր

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հարաբերություններ

Պարույր Հայրիկյան. «Ռուսաստանի ընտրություններին ես նայում եմ մեծ հանդարտությամբ»

Մեր թղթակիցը շարունակում է Ռուսաստանի առաջիկա նախագահական ընտրությունների ակնկալվող արդյունքների եւ Հայաստանի քաղաքական զարգացումների վրա դրանց ունենալիք ազդեցության խնդրի շուրջ քաղաքական գործիչների հետ իր հարցազրույցների շարքը. Այսօր նրա զրուցակիցն է Ազգային ինքնորոշում միավորման նախագահ Պարույր Հայրիկյանը:

– Ձեր կարծիքով, ո՞վ կհաղթի Ռուսաստանի նախագահական ընտրություններում:

– Երեսի իմ դատաստանը, ընդգծված հակակոմունիստի, իր կյանքի լուսավորյալ տարիները կոմունիստական ամբողջատիրության դեմ դայքարած մարդու դատաստանը, առաջին հայացքից արտառոց բան, երեսասեմ, որ ինձ այնքան էլ չի հուզում, թե Ռուսաստանում ով կընտրվի, բայց շատ է հուզում, որ այնտեղ իսկական ընտրություններ լինեն: Իմ 30 եւ ավելի տարիների քաղաքական փորձառությունը ինձ հանգեցրել է հետևությանը, ինչը որոշված է ինչպեսով: Այն հարցից, թե ես համոզված եմ, որ երբ վաղը Մոսկվայում իշխանության գան կոմունիստներ, նա առանց այնպայության կվերցնի իր դիրքորոշումը: Քաղաքական գործունեության մեջ նախագահը դա բնական է գտնում: Ինչո՞ւ ասացի: Որովհետեւ մեզ հետ բոլորովին կարող չանցնող հարցի վերաբերյալ առհասարակ էիզացումը համարում եմ հողաղացների դեմ դայքարզմ:

–Դուք գտնում եք, որ Ռուսաստանի ընտրությունները մեզ հետ իսկապես բացարձակորեն որեւէ կապ չունե՞ն:

– Երբ մենք խավարտիկ մնանք մեր ձեռք բերած կարգավիճակին, դրանք մեզ վրա որեւէ կերպ ազդել չեն կարող:

Ինչ վերաբերում է Հայաստանին, արդա կարծում եմ, որ մեր առաջիկա ընտրությունների ճակատագիրը կանխորոշված է, եւ դա ամենեին կապ չունի Ռուսաստանում կայանալիք ընտրությունների հետ: Կանխորոշված է ընտրությունների մասին վերջին օրենքով, որում այսօրվա կառավարողներ արդեն իրենց համար աղաղակող բոլոր ընտրական հանձնաժողովներում: Ես արդեն դատապարտել եմ նաեւ, որդեղ հանրաքվեության նախագահին, որդեղ նա տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին օրենքում, հանձնաժողովների ձեւավորման կարգի հետ կապված, արդեք օգտագործի, երբ իմն ազնիվ մարդ է: Երբ դա չարվի, եթե մենք այս օրենքով գնանք ընտրությունների, արդա արդեն մեր «չընտրությունների» հարցը որոշված է:

– Երբ Դուք համոզված եք, որ կրկնվելու է հուլիսի 5-ը, արդա ինչո՞ւ եք ուզում մասնակցել նախագահական ընտրություններին: Չէ՞ որ դրանով իսկ Դուք դեմոկրատիզմի դատարանի կոչեցիք Ձեր իսկ բնորոշած «կանխորոշված չընտրությունների» համար:

–Իսկզբ Հայրիկյան նենտահին չի վերաբերում: Այդքանի հայտարարությամբ ես հանդես եմ եկել մեր վերաբերում: Այդքանի հայտարարությամբ ես հանդես եմ եկել մեր վերաբերում, որ երբ «չընտրություններ» լինեն, արդա ճիշտ կլինի, որ մենք դրան չգնանք: Բայց տեսեք, հուլիսի 5-ին մեր ասամբլեայի դեմոկրատիզմի դատարանի չանցնելիս, հակառակը, մենք կարողացանք կեղծիքներ մերկացնել: Եվ արդա, ԱԻՄ-ի նախագահը լինելով, ես նուն երս շարքային անդամն եմ: Իսկ տվյալ հարցը որոշում է ԱԻՄ-ի վերահսկողական մարմինը, որին չեմարդկվել: Ինչպես դարձ դեմ դարձ կրկնվելիս դիտարկելիս: Մի դարեար դրան կա. ի վերջո, մենք եկանք ճանաչելի բերանով աջակցելով, մի ոչ շատ էնք ակնկալ ապրի համար օգտակար լինելու: Մտածում եմ, ենթադրում, բայց հետո դա դառնում է խնդրանքի. այնքան բնական, որ արդեն մոռանում ենք, թե դրանք ո՞ւմ գաղափարներն են:

–Ազգային բանակ, Սահմանադրություն, նախագահ: Մեզանում ո՞վ է վիճարկում, որ դրանք նախ եւ առաջ Հայրիկյանի գաղափարներն են:

– Հայրիկյանի կողմից ժողովրդին վերադարձված գաղափարներ: Այսօր էլ եւ առաջ եմ քաշում այդպի գաղափար. այն մարդը, ով նախագահ է ընտրվում չարքի ճանաչելով, նա հեռագրում չարքի է չնեւավորվի նոր իշխանությունը:

– Վերադառնանք մեր խոսակցությանը: Երբ Մոսկվայում իշխանության գա Գենադի Զյուգանովը, Դուք մտավախություն չունե՞ք, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը նրա հետ չի կարողանա համագործակցել եւ մեր ղեկությունների հարաբերությունները դրանից կտուժեն:

– Լեւոն Տեր-Պետրոսյանը երկար տարիներ շատ սիրով աշխատել է կոմունիստների օրոք, Հայաստանում իշխանության է եկել, երբ Մոսկվայում կոմունիստներն էին... Զյուգանովի ընտրվելու դեպքում կասի, որ իր հայտարարություններն ուղղված Լին ասպիրանտ տիպի կոմունիստների դեմ, իսկ այսօրվա կոմունիստները բաս Լենինյան կոմունիստ էլ չեն, սոցիալ-դեմոկրատներ են: Իսկ Զյուգանովը, դեռսկան գործիչ դառնալով, ղեկի դեռսկան մակարդակի հարաբերությունների գնա: Պետական շահերը կտիպեն, որ նա դաշնակից ղեկությունների նախագահների հետ, նաեւ գաղափարական հակառակորդների, հարաբերություններ հաստատի:

– Այդպիսով, մոլի ռեակտիվական Պարույր Հայրիկյանը Ռուսաստանի ընտրությունների արդյունքներից Հայաստանի անկախության համար որեւէ սպառնալիք կամ վտանգ չի՞ տեսնում:

– Սպառնալիք կամ վտանգ միշտ կա, ինչ առաջինանի անկախության էլ հասնեմ: Բայց անկախության գաղափարում մի առանցքային դրսի կա: իմքնորոշման իրավունքի առկայությունը: Անկախության ասելով, մենք նկատի ենք ունեցել ոչ-տանմներ ընդունելիս անկախ լինելու մեր դատաստան: Մենք դրան հասել ենք, մնացածը հասկանալի է բացարձակ անկախ դեռսության չկա: Ուստի կարծում եմ, որ որեւէ վտանգ մեզ չի սպառնում. այն ավելին չի լինի, քան այսօր է, ով էլ որ Ռուսաստանում իշխանության գա: Բնականաբար, նոր իշխանությունը որեւէ երկրում որոշակի վերանայումներ են անում իրենց երկրի նեղ մի արտաքին քաղաքականության մեջ: Բայց երբ երկիրը ժողովրդավարական է, արդա սովորաբար արմատական փոփոխություններ տեղի չեն ունենում: Մեզ համար Ռուսաստանը վտանգավոր է միայն այն ժամանակ, երբ նա որեւէ տեսակի ամբողջատիրական է. լինի դա ֆաշիստական, կոմունիստական, միապետական, կրոնատեսական, թե մի այլ կարգի ամբողջատիրություն: Իսկ ժողովրդավարական Ռուսաստանը մեր բնական դաշնակիցն է...

ՈՍԵԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյան եւ Աղասի Խանջյան

Այս դեմքերի փոխհարաբերությունների մասին որոշ ժամանակ առաջ «Ազգ»-ում հոդվածներ հրատարակվեցին («Ազգ», 10 հունվար եւ 6 փետրվար, 1996թ.):

Ընթերցողի ուշադրությունը հանձնվող հետեւյալ նյութը վկայում է, որ 1932 թվականի տարեվերջին Ա. Չոպանյանի եւ Ա. Խանջյանի հանդիպումից հետո, նրանց միջեւ եղել է նամակագրություն: 1932 թվականի ընթացքում հայրենադարձված գաղթականների մեջ եղան մարդիկ, որոնք փախան Հայաստանից: 1933 թվականի երկրորդ կեսին Սփյուռքի մամուլում, հատկապես ՀՅ Դաշնակցության օրգաններում, երեւացին հոդվածներ այդ մասին, որոնցում բավականին աղմուկ էր բարձրացվում: Ի պատասխան, Ա. Չոպանյանը Փարիզի «Առագայում» հոդվածաշար տպագրեց «Հայաստանից փախչողներ» վերնագրությամբ: Դեկտեմբերի 9-ի համարում նա գրում է. «... ես նամակով մը հարցուցի պ. Ա. Խանջեանին, թէ ինչպէ՞ս կը բացատրէր այն խմբական փախուստները...

... Կ'ուզեի գիտնալ թէ արդեօք այդ հազարաւոր ներգաղթողներուն տեղաւորելու, գործի դրուելուն դժուար ափխատանին մէջ տեղ-տեղ սոսրադաս պաշտօնեաներու կողմէ անհոգութիւններ, անփափկակեաութիւններ, այս կամ այն տեսակ սխալներ չէ՞ն գործուած, ես կը խնդրէի որ կառավարութիւնը հաստատ քննութիւն մը կատարել եւ եթէ գործուած էին հոս կամ հոն մանրամասնութեան պակասութիւններ, միջոցներ ձեռք առնուին որպէսզի յաջորդ կարաւաններու հասնելուն՝ այդպիսի բացառութիւններ չկրկնուին... Ինչ որ անց ստացայ իր պատասխանը»:

Ա. Չոպանյանը հրապարակում է Ա. Խանջյանի պատասխան նամակը հենց նույն համարում, ցավոք, չի նշում նամակի ամսաթիվը:

«Յարգելի բարեկամ,

Շնորհակալութիւն ձեր վերջին նամակի համար, որ օրերս ստացայ: Ներգաղթածների դրութեան եւ ներգաղթի ծօսակայ հնարաւորութիւնների մասին ընկ. Str-Գաբրիելեանը վերջերս մի նամակ էր ուղարկել: Այդ նամակի հետ վստահ եմ, որ ծանօթ պիտի ունենայ ձեր ծանոթանալ: (Ա. Տեր-Գաբրիելյանի նամակը իրոք հրատարակվել էր «Առագայ» թերթում՝ Կ. Դ.): Այդ պատճառով էլ կը բաւականամ հետեւեալ երկոտդով:

Վերջին մէկ-մէկուկէս տարուան ընդունեցեալներ ՇՏ 8500 գաղթականներ: Սրանց գերակշռող մեծամասնութիւնը այսօր արդէն արմատաւորուել է մեր երկրում, այսինքն ընտելացել ու ընտելանում է կեանքի, կենցաղի եւ ափխատանքի նոր պայմաններին, աւելին, արդէն գոհ է իր պայմաններից: Սակայն եղան նաեւ 100-150 գաղթականներ, որոնք, չնայած մեր համաոգասխան մարմիններին բոլոր ջանքերին, չկարողացան կամ չկամեցան ազնիւ ափխատանքի միջոցով կայուն երկրի հետ: Այդ մարդիկ, ես յստակ քննութեան միջոցով այդ հասատեցի, կարճ ժամանակում 3-4 անգամ տեղից տեղ անցան, փոխեցին ափխատանքի բնոյթը, բայց միշտ էլ դժգոհ մնացին: Խօսք չի կարող լինել այդ մարդկանց նկատմամբ՝ ոչ սովի, ոչ էլ «անտանելի» պայմանների մասին: Տարակոյս չպէտք է ունենայ, որ իւրաքանչիւր ներգաղթածին Հայաստան գալուն պէս տուել ենք որոշ ափխատանք եւ բնակութեան տեղ (համաձայն Ա. Չոպանյանի ծանուցման, ընդգծված է Ա. Խանջյանի կողմից՝ Կ. Դ): Ցիշդ է, բնակարանները ոչ միշտ անհրաժեշտ յարմարութիւններով, դուք ինքներդ տեսաք որ երկրի բնիկների մի մասն էլ բնակարանի տեսակէտից այնքան նախանձելի պայմաններում չի գտնուում դեռ: Ես անձամբ տեսայ եւ համոզուեցի եւ Անի-Պեմզայում, եւ Արթիկ-Տուֆում եւ այլ տեղերում, որ մեր տնտեսավարների մի մասը նրբազգաց եւ ուշադիր վերաբերմունք է ունեցել հանդէպ ներգաղթածներին»:

Այնուհետեւ, Ա. Խանջյանը այդ երեւույթի հիմնական եւ «գլխաւոր պատճառը» տեսնում է դաշնակցության «Պրովոկացիոն ու դատարդիր ափխատանի» մէջ: Նա հերքում է Հայաստանում սովի մասին տարածված լուրերը: «Հայաստանում այս տարի հացաբոյսերի բերքն աւաս էր, բանուորն ու գիւղացին կուշտ են եւ կ'լինեն: Բացի հացի պետական մատակարարումից, բոլոր ափխատաւորներին (կիլօն 25 կոպեկ), վերջերս կազմակերպեցինք նաեւ հացի պետական ազատ վաճառք: Որովհետեւ մթերումները յաջողութեամբ աւարտուեցին, շուտով կ'սկսուի նաեւ հացի գիւղացիական ազատ վաճառք: Ինքներդ տեսեք, թէ ինչ արժէք ունի այս պայմաններում դաշնակների վայնասունները «Հայաստանի», «սովի» մասին»...

Ա. Խանջյանն իր նամակը եզրափակում է մի հետաքրքրական հետ-գրությամբ.

«Յ. Գ.- Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում Չարենցի վերջին հատորի վրայ («Գիրք ճանապարհի»): Մեր գրականութիւնն այդ գրքով բարձրանում է մի նոր, բարձր գագաթ: Հաւատացած եմ, որ գիրքը կ'ոգեւորի ձեզ»:

Իր կողմից Ա. Չոպանյանն ավելացնում է.

«Նամակի յեզրութիւնն ալ կը հրատարակեմ, որպէսզի թէեւ կարդ չունի ներգաղթի խնդրոյն հետ, յատկանշական է ցոյց տալով անցած մը եւս այն ջերմ սէրը եւ հոգածութիւնը որ պ. Խանջեան ունի հայ մշակոյթի զարգացման գործին (դժբախտաբար Չարենցի այդ նոր գործն որեւէ օրինակ դեռ մեզի չէ դրկուած)»:

Ա. Խանջյանի նամակի հրատարակման առիթով Փարիզի «Յառաջի» մեջ Սիմոն Վրացյանը երկու հոդված է տպագրում: Նա գրում է. «Հայ կղերամտութեան եւ դրամատէրերի երդուեալ խնկարկու,- չըսելու համար սպասարկու,- Ա. Չոպանեանը կարողացել է անուշ լեզու գտնել հայ կղերամտութեան եւ դրամատէրերի երդուեալ բշնամի Խանջեաններուն հետ»: Ա. Չոպանյանը մեղադրում է «խնկարկու» եւ «սպասարկու» մեղադրանքները, առա շարունակում (հաղված է «Առագայի» 1934 թվականի հունվարի 27-ի համարից). «Մեր Հայրենիքի վերելքին՝ մարխիստական ըմբռնումով, բայց իրականին մեջ անվիճելիորէն ազգօգուտ արդիւնքներով՝ գիտեր ցերեկ ափսառող գաղափարապաշտ եռանդուն ու կորովի համայնավար հայ գործիչ մը եւ Հայաստանի զարգացման աջակցիչ իր աւագ պարակցութիւնը նկատող արտասահմանեան հայրենասէր հայ մտաւորական մը իրարու հետ բարեկամական զգացումներով կապելու լիովին կը բաւէ, ինչ ալ ըլլան ընկերական, իմաստասիրական եւ այլ հարցերու վրայ, իրենց տարակարծութիւնները»:

Սիմ. Վրացյանը զարմանք է հայտնել, թե Ա. Խանջյանը չի փախցնել «հայրենադաւաճառական մէկին այդպիսի մտերմական նամակ գրելու»: Ա. Չոպանյանը պատասխանել է, որ Ս. Վրացյանը կարող է վստահ լինել, «թէ այդ նամակի հրապարակումն Ա. Խանջեանին որեւէ վնաս չի հասնիր: Խ. Հայաստանի մէջ ամէն ոք գիտէ որ Խանջեան հայերուն ամէնէն հանդիսնավարն է, համայնավար մը, որ սակայն հարազատ հայ մըն է եւ գեղարուեստի ու գրականութեան իրական արժէքներուն հասկացողութիւնն ու ճաշակ ունի»:

Հիմնվելով խորհրդային մամուլի վրա, Սիմոն Վրացյանը հայտնել է, որ 1933-ի նոյեմբերի 14-ին ՀԿԿ կենտկոմի քարտուղարությունն արգելել է Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին» հատորը: Ա. Չոպանյանը ցավով հաստատում է, որ այդ մասին իմն իմացել է միայն «Խորհրդային Հայաստան» թերթի նոյեմբերի 18-ի համարը ստանալուց հետո: Բայց եւ վստահ ավելացնում է. «Նոյեմբեր 14-ին տուած որոշումները տուած են ի բացակայութեան Խանջեանի, որ ամիս մը հեռացած էր Երեւանէն՝ հանգչելու համար: Իր դարձին, նոյն մարմնոյն (իմա՝ կենտկոմի քարտուղարության) դէպ. 8-ի նիստին մէջ, ուր ինքն իսկ Խանջեան ուժեղ ճառով մը նոյ. 14-ի որոշումներուն «յեղափոխական-մարխիստական տեսակէտով իսկ սխալ» ըլլալը հաստատած է, Չարենցի նոր գրքին-ինչպէս եւ նմանօրինակ բանի մը ուրիշ գրական նոր հրատարակութեանց-մասին տուած ժխտական որոշումները չեղեալ են...»:

Ինչպես ցույց տվեց դեպքերի ընթացքը, Ա. Չոպանյանի վստահությունը շատ կանուխ էր հայտնված: 1936 թվականի ամռանը Ա. Խանջյանի չարենցագողությունից հետո, Լ. Բերիան «Պրավդա» օրաթերթում նրա նկատմամբ հարուցած հետմահու ամբաստանությունների թվում հիմնականներից մեկը նշում էր Ա. Խանջյանի «հանցավոր» կապը «նացիոնալիստ» «ոմն» Ա. Չոպանյանի հետ:

ԱՐԱՐԱՏ ՊԱՊԱԼՅԱՆ,
Բանասիրության դոկտոր

digitised by A.R.A.R.@

ՀՀ ԳԱՎԱԹ

Գավաթն էլ «Փյունիկին»

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.

«Փյունիկը» նվաճեց Հայաստանի ֆուտբոլային երկու գլխավոր մրցանակները՝ չեմպիոնի տիտղոսը և հանրապետության գավաթը: Եզրափակիչ հանդիպումը դրամատիկ երկ ունեցավ: Նախատեսս ոչ ոք չէր կասկածում, որ չեմպիոնը գավաթի խաղարկությունում էլ հեշտությամբ առավելության կհասնի «Կոտայքի» նկատմամբ: Եվ ամեն ինչ այդպես էլ ընթանում էր: Ցիրս է, առաջին կեսում «Կոտայքը» հասցրեց դիմադրության էլ զույգ տալիս գլխավոր ուժերը կենտրոնացնելով իր տագնապային հարվածների մատույցներում, և «Փյունիկը» միայն 45-րդ րոպեին կարողացավ բացել հաշիվը: Այդի ընկավ Համլետ Մխիթարյանը, որը նրան տարածությունից կատարած հարվածով անակնկալի բերեց «Կոտայքի» դարպասապահ Արմեն Հովհաննիսյանին: Թվում է, խաղային այդ իրադրությունում դարպասապահը վստահ չգործեց: Երկրորդ կեսում «Փյունիկի» առավելությունն ավելի ուժգնորեն էր: Թիմը գործում էր անկասկած և իրեն հատուկ կոմբինացիոն հարձակողական ոճով, որին մասնակցում էին գրեթե բոլոր օղակների խաղացողները: Հաջողությունը հաջորդում էր Վարդան Մինասյանի բարձրարվեստ փոխանցումից հետո Վարդան Խաչատրյանի գլխով հարվածը, որից հետո «Կոտայքի» դարպասապահը ստիպված էր գնդակը հանել դարպասից: Մինչ այդ գոլի հեղինակ դարձավ նաև Արսեն Ավետիսյանը: Երբ հաշիվը 3-0 էր, թվում էր խաղի ելքը վճռված է, մանավանդ, որ ոչ ոք չէր կասկածում «Փյունիկի» կարողություններին: Սակայն, հանդիպման վերջին ռոպեներին կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ: Ընդամենը երկու ռոպեի ընթացքում «Կոտայքի» ֆուտբոլիստները հետու տարածությունից հարվածներով կարողացան կրճատել հաշվի տարբերությունը այն հասցնելով նվազագույնի: Նախ, այդի ընկավ Ռոբերտ Միրզոյանը, ապա Լևոն Մարգսյանը: Երկրորդ կեսի ավարտին մնացել էր ընդամենը 5 ռոպե, և «Կոտայքի» համար խաղը փրկելու անողոքելի հեռանկարներ բացվեցին: Թիմը, ստանալով հոգեբանական առավելություն, մեծ ուժերով նետվեց առաջ, սակայն «Փյունիկը» զգաստացավ, առիթը բաց չթողնելով սառ հակագրոհներ ունենալ: Նախատեսս ոչ ոք չէր կասկածում, որ չեմպիոնը գավաթի խաղարկությունում էլ հեշտությամբ առավելության կհասնի «Կոտայքի» դարպասապահ Արմեն Հովհաննիսյանին: Թվում է, խաղային այդ իրադրությունում դարպասապահը վստահ չգործեց: Երկրորդ կեսում «Փյունիկի» առավելությունն ավելի ուժգնորեն էր: Թիմը գործում էր անկասկած և իրեն հատուկ կոմբինացիոն հարձակողական ոճով, որին մասնակցում էին գրեթե բոլոր

ՀՀ գավաթակիր երեւանի «Փյունիկը»

ունեցավ: Նախատեսս ոչ ոք չէր կասկածում, որ չեմպիոնը գավաթի խաղարկությունում էլ հեշտությամբ առավելության կհասնի «Կոտայքի» դարպասապահ Արմեն Հովհաննիսյանին: Թվում է, խաղային այդ իրադրությունում դարպասապահը վստահ չգործեց: Երկրորդ կեսում «Փյունիկի» առավելությունն ավելի ուժգնորեն էր: Թիմը գործում էր անկասկած և իրեն հատուկ կոմբինացիոն հարձակողական ոճով, որին մասնակցում էին գրեթե բոլոր գնդակը հանել դարպասից: Մինչ այդ գոլի հեղինակ դարձավ նաև Արսեն Ավետիսյանը: Երբ հաշիվը 3-0 էր, թվում էր խաղի ելքը վճռված է, մանավանդ, որ ոչ ոք չէր կասկածում «Փյունիկի» կարողություններին: Սակայն, հանդիպման վերջին ռոպեներին կտրուկ շրջադարձ տեղի ունեցավ: Ընդամենը երկու ռոպեի ընթացքում «Կոտայքի» ֆուտբոլիստները հետու տարածությունից հարվածներով կարողացան կրճատել հաշվի տարբերությունը այն հասցնելով նվազագույնի: Նախ, այդի ընկավ Ռոբերտ Միրզոյանը, ապա Լևոն Մարգսյանը: Երկրորդ կեսի ավարտին մնացել էր ընդամենը 5 ռոպե, և «Կոտայքի» համար խաղը փրկելու անողոքելի հեռանկարներ բացվեցին: Թիմը, ստանալով հոգեբանական առավելություն, մեծ ուժերով նետվեց առաջ, սակայն «Փյունիկը» զգաստացավ, առիթը բաց չթողնելով սառ հակագրոհներ ուժեղ մրցակցի հետ դարձյալ: Այնուամենայնիվ, այսօր «Փյունիկը» մեր ընդգծված առաջատար թիմն է, և նրա հաղթանակը գավաթի խաղարկությունում միանգամայն տրամաբանական է: Ողջունենք «Փյունիկին» նաև գավաթի առթիվ, ինչպես նաև «Կոտայքին», որը բոլոր դիտորդում խոսվում ստացավ Հայաստանը ներկայացնել Գոտեպահպանների գավաթի խաղարկությունում:

«Փյունիկից» Հայաստանի գավաթակիրներ դարձան Արմեն Ավագյանը, Աշոտ Մկրտչյանը, Վարդան Խաչատրյանը, Սարգիս Հովսեփյանը, Տիգրան Մկրտչյանը, Արամայիս Տոնոյանը, Վարդան Մինասյանը, Վարազդատ Ավետիսյանը, Արսեն Ավետիսյանը, Համլետ Մխիթարյանը, Սեյրան Պողոսյանը, Արմեն Սանամյանը, Անդրանիկ Զանազանյանը և Գեղամ Հովհաննիսյանը:

ԳՈՒՅԺ

Վախճանվեց Հրանտ Շահինյանը

Դեռ երեկ բարգավաճում էր հայ առաջին օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինյանի մտքը: Կյանքից հեռացավ անսպասելիորեն: Նրա անունը վաղուց լեգենդ է դարձել հայկական մարզաշխարհի և ոչ միայն այս բնագավառի մարդկանց համար: Հրանտ Շահինյանի մարզական նվաճումները դասական են. 1952 թ. Հելսինկիում տեղի ունեցած օլիմպիական խաղերի չեմպիոն օղակների վրա վարժություններում և բիմային առաջնություններում, արծաթե մեդալակիր անհատական մրցումներում ու նժույգաբահիերում, նույն թվականին ԽՍՀՄ բացարձակ չեմպիոն. 1954 թ. աշխարհի բիմային առաջնության հաղթող և նժույգաբահիերի աշխարհի չեմպիոն: 1944-55 թթ. մարմնամարզության բազմամարտի տարբեր ձևերի ԽՍՀՄ բազմակի չեմպիոն: 1951 թ. Հրանտ Շահինյանն արժանացել է արարի վաստակավոր վարպետի. 1957 թ. միջազգային մրցավարի. 1961 թ. Հայաստանի վաստակավոր մարզչի. 1965 թ. ԽՍՀՄ վաստակավոր մարզչի. 1966 թ. Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր գումարման մրցումներին: 1967-68 թթ. եղել է հանրապետության սպորտկոմիտեի նախագահ, երկար տարիներ նաև նախագահի առաջին տեղակալ: Հրանտ Շահինյանն իր բազմաբնույթ մարզական գործունեության ընթացքում մի շարք սերունդների համար արարի ազնվորեն ծառայելու խրախուսիչ օրինակ է եղել Հայաստանում և ԽՍՀՄ-ում: Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գործկոմը Հրանտ Շահինյանին նեղայացրել էր «Ֆեյր փլեյի» Ազնիվ խաղ միջազգային կոմիտեին լեգենդար մարդկին Պիեռ դ'Կուբերտենի մրցանակով պարգևատրելու համար: Այս մրցանակը տրվում է մարզական կենսագրության ընթացքում օրինակելի վարքի և ազնվության համար:

«Ֆեյր փլեյ» ազնվություն և ասամիություն, լինի մարզական ասպարեզում, թե կյանքում, միշտ եղել է Հրանտ Շահինյանի գլխավոր նշանաբանը: Ուշագրավ է, որ երբ Տիգրան Պետոսյանը դարձավ շախմատի աշխարհի չեմպիոն, Հրանտ Շահինյանը ի նշան հայրենակցի փառահեղ հաղթանակի, Տիգրան Պետոսյանին նվիրեց աշխարհի չեմպիոնի իր ոսկե մեդալը: Արժանահիշատակ է Հրանտ Շահինյանի մարզական առաջնության ևս մեկ դեպք: 1956 թ. Մելբուռնի օլիմպիական խաղերին մասնակցելու համար, ի նշան հարգանքի և ունեցած մեծ ծառայությունների, ԽՍՀՄ հավատական էր հրավիրել նաև 33-ամյա Հրանտ Շահինյանը: Սակայն նա մեծ հարվածներ հասցրեց օլիմպիական խաղերում նեղայա գնվելու հնարավորությունից և իր տեղը զիջեց ավելի երիտասարդ բիմակցին:



1958 թ. Հրանտ Շահինյանը հիմնադրել է ոչ միայն Հայաստանում և ԽՍՀՄ-ում, այլև ամբողջ աշխարհում մարմնամարզության առաջին մասնագիտացված դպրոցը, որը հետագայում տվել է բազմաթիվ անվանի մարմնամարզիկներ, այդ թվում և օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Էդվարդ Միհայելյանին: Հրանտ Շահինյանի մարզական գործունեությունը հարուստ է եղել արարի անկրկնելի և ազնվորեն ծառայելու օրինակներով: Նա Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահն էր, հանրապետության մարմնամարզության Ֆեդերացիայի առաջին փոխնախագահը:

Հանրապետության մարզասերների անունից ցավ ենք հայտնում Հայաստանի անդրանիկ օլիմպիական չեմպիոնի անակնկալ մահվան կապակցությամբ:

Նրա մարդական հարուստ կենսագրությունը և ասպետական կեցվածքը միշտ կիսվի մարզասերների կողմից:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Կուրբիսը կարող է նշանակվել «Բորդոյի» նոր մարզիչ

ՌԵՆԱ-ի գավաթի եզրափակիչ խաղում «Բավարիայից» կրած պարտությունից հետո «Բորդոյի» կազմում էական փոփոխություններ կատարվեցին: Վարչական խորհրդում Ժիրանի, Դյուգարիի և Լիզարազուի տեղափոխությունները հաստատելուց հետո, ակումբի նախագահ, ակնոցագործ Ալեն Աֆլալոն որոշեց ազատվել նաև մարզիչ Ժերոն Ռոհրից: Վերջինիս հանձնաբար կփոխարինի Ռոլան Կուրբիսը: Նախագահի հին ծանոթը: Ցիրս է, առայժմ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, բայց Կուրբիսը կնկրես առաջարկ է ստացել եւ օրերս երկու անգամ նախանձել է ակումբի նախագահի հետ: Այս մասին տեղեկացող «Էկիպ» օրաթերթը նշում է, որ «Բորդոյի» կազմի փոփոխման այս անթոյլ գործընթացն սկսվել էր մայիսի 16-ին ակումբի հանձնախմբի ժամ-Դիդիե Լանժի հրաժարականից: Դրանից հետո Վիլլեն տեղափոխվեց «Այաքս», իսկ դանիացի Ֆրիս-Հանսենը (այդ անձնագրի տիրանոջում էր ամսական 200 հազար ֆրանկ)՝ «Հանրուգ»: Ավելի ուշ ակումբի նախագահը հայտարարեց, թե մարզիչ Ժերոն Ռոհրի հետ կնքված պայմանագիրը կարող է եւ չերկարաձգվել: Դա նշանակում է, որ նախագահն ուրանում է «Միլանի» նկատմամբ «Բորդոյի» տարած փայլուն հաղթանակը եւ մարզիչ Ռոհրի հետ բազմաթիվ պայմանագիր կնքելու իր խոստումները: Դեռ մարտի 28-ին նախագահն օրանավի մեջ Ռոհրին ասել էր. «Ժերոն, վաղը կնորոգենք պայմանագիրը», իսկ՝ հաջորդ օրը «Ծոռացավ» ամեն ինչ: Պարզվեց, որ հենց մայիսի 20-ի երեկոյան վարչական խորհրդի նիստում որոշվել էր Ռոհրին վերանշանակել ֆուտբոլիստների պատասխանատու կենտրոնի ղեկավար, ըստ որում այդ վճռի կայացման վրա էապես ազդեց Ալեն Աֆլալոն հրաժարվեց մեկնաբանել իր կտրուկ շրջադարձը, երկրի մարզական մեկնաբաններին հայտնի է, որ վերջին շաբաթներին մարզիչ Ռոհրի հետ նրա հարաբերությունները բավական լարված էին եղել: Բացի դրանից, արդեն նախկին հանձնախմբի ժամ-Դիդիե Լանժը Ռոհրի բացահայտ հանձնիրն էր: Սակայն էին նաև ֆուտբոլիստների հետ կապված տարաձայնություններ: Ի դեպ, օրերս, պատասխանելով նաև «Բորդոյի» մարզական տնօրեն Միշել Բանգիգին:

Ինքը՝ Ռոհրը, այդ անակնկալ վճռից հետո հայտարարեց. «Հավատում եմ, որ ինձ տրված խոսքը չի հարգվել, մինչ որոշ ղեկավարներ դրանից հետո մտածում»: Ռոհրը նույնիսկ չհիշատակեց 1991-92 թթ. մրցաշրջանը, երբ «Բորդոյի» վերելքն արագացելուց հետո իրեն հեռացրել էին մարզչի պաշտոնից: Իսկ վերջին որոշման աթիվ միայն ասաց. «Ես ակումբի հավատարիմ զինվորն եմ: Չեմ ուզում միանգամից մեկնաբանել նախագահի վճիռը: Թող ուրացողները մեկնաբանեն իրենց խոսքերը»: Սակայն ինչ վկայում է, որ չնայած Ռոհրի հիասթափությանը, ժերոն Ռոհրը կմնա «Բորդոյում» եւ սիրելի թիմին կշարունակի ծառայել որպես ֆուտբոլիստների պատրաստման կենտրոնի ղեկավար:

Միաժամանակ Բորդոյում գրեթե հանգիստ են, որ նոր մարզիչ է նշանակվելու «Բորդոյ» ակումբի նախկին մարզիչ Ռոլան Կուրբիսը: Չնայած պայմանագիր դեռ չի ստորագրվել, նախագահ Աֆլալոյի մերձավորների կարծիքով, Կուրբիսի վերադարձի հավանականությունը կազմում է 99 տոկոս: Նախագահն օրերս ասաղոյով նույնիսկ հայտարարեց. «Ես մի օր կրկին կաշխատեմ Կուրբիսի հետ»: Ինքը՝ Կուրբիսը, առայժմ չի հավատել, թե «Բորդոյի» մարզիչը դառնալու առաջարկ է ստացել, բայց խոստովանել է, որ ապիր է ունեցել «մի քանի ճնշարկում անցկացնել Ալեն Աֆլալոյի հետ»:

ՊԵՏՐՈՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

Հայաստանի հավաքականը մեկնեց Ֆրանսիա

Այսօր վաղ առավոտյան Ֆրանսիա մեկնեց ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականը, որն, ինչպես հայտնի է, հունիսի 5-ին Վիլնոֆ դը Ասք քաղաքում, ստուգողական խաղում ուժերը չափելու է Եվրոպայի առաջնությանը նախապատրաստվող Ֆրանսիայի հավաքականի հետ:

Ֆրանսիա մեկնեց նաև մեր բերբի մարզական պատասխանատու Սուրեն Բաղդասարյանը: Ֆրանսիա-Հայաստան խաղը լուսաբանելուց հետո (ի դեպ, նախատեսվում է հանդիպման երկրորդ կեսի ուղիղ ռադիոռեպորտաժ ու նաև, հեռարձակության սահմաններում, հեռատեսային տեսագրություն, որը հավանաբար ցուցադրվի խաղից մեկ կամ երկու օր հետո) նա հունիսի 7-ին կմեկնի Անգլիա, որտեղ հունիսի 8-ին մեկնարկելու է «Եվրոպա-96»-ի եզրափակիչ մրցաշարը:

ԵՐԵՎԱՆ-96

85 երկիր երեւանյան օլիմպիադայում

Ուզբեկյան առաջին անգամ հանդես կգա շախմատի համաշխարհային օլիմպիադայում: Այս մասին է հաղորդում շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադայի կազմկոմիտեում ստացված զրույցը:

Շախմատային մեծ համաժողովին մասնակցելու պատասխանատու հայտեր ներկայացրին նաև Ուրուգվայը, Հոլանդական Անտիլները, Պարագվայը:

Շախմատի 32-րդ համաշխարհային օլիմպիադային մասնակցելու ցանկություն հայտնած երկրների թիվը հասավ 85-ի:

ԳԱՐԵՂԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանվոր մարդ է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՇՐՋԱՆ

Իսլամ Քարիմովը Բաքվում եւ Թբիլիսիում ստորագրեց բազմաթիվ համաձայնագրեր

Ուզբեկստանին շգում է կովկասյան մայրուղին

ԲԱՔՎԻ, 29 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի եւ Ուզբեկստանի բարեկամության ու համագործակցության պայմանագրի ստորագրումը դարձավ նախագահ Իսլամ Քարիմովի Բաքու կատարած դաշնային այցի ինքնական առդրումը: Կնքվել է նաեւ 19 համաձայնագիր, որոնք կարգավորում են ապրանքա-ապրանքական կապերը տնտեսության, առեւտրի, տրանսպորտի, մշակույթի, գիտության եւ առողջապահության ոլորտում: Այսպիսով, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի եւ նրա ուզբեկ դաշնակցի բնորոշմամբ, ամուր իրավական հիմք է ստեղծված երկու երկրների լայնածավալ հարաբերությունների զարգացման եւ ամրապնդման համար:

Ինչպես արտահայտվել է Իսլամ Քարիմովը, Ադրբեջանի եւ Ուզբեկստանի համագործակցության չօգտագործված հնարավոր հսկայական է եւ երբ նկատի առնվի, որ նախորդ հինգ տարին, նրա արտահայտությամբ, «սնարդյունավետ էին» այդ երկու երկրների փոխհարաբերությունների համար, ապա դեռ է հնարավոր ամեն ինչ անել ձեռքից բաց թողածը եւ բերելու համար:

Բանակցություններում կենտրոնական տեղ էին գրավել տնտեսական համագործակցության խնդիրները, հատկապես հաղորդակցությունների զարգացման ոլորտում: Ինչպես հայտարարեց Իսլամ Քարիմովը, տարածաշրջանի դեսությունների համար մեծ հնարավորություններ է ստեղծում կովկասյան փոխադրական մայրուղի կառուցելու նախագծերի իրականացումը, որն անցնելու է Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի տարածքով: Այդ մայրուղին կարող է լրջորեն ազդել տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրության վրա, միջինասիական դեսությունների եւ մասնավորապես Ուզբեկստանի համար ուղիղ ճանապարհ կբացի դեպի ծով եւ այնուհետեւ Եվրոպա, իսկ Ադրբեջանին եւ Վրաստանին եւ կտա դեպի Կենտրոնական Ասիա: Քարիմովն արտահայտել է իր երկրի պատրաստակամությունը նախագծի երթանակներում կատարելու ներդրումներ կատարելու Բաքվի նավահանգստի վերակառուցման մեջ:

Անդրադառնալով ԱՊՀ-ի երկանակներում միասնացման խնդիրներին, երկու նախագահներն արտահայտվել են Համագործակցության ներսում որեւէ միության իրենց երկրների միանալու դեմ: Հորինման չյուր դեսությանը վերադահելով սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու իրավունքը, Իսլամ Քարիմովը բանակցությունների արդյունքներին նվիրված մամուլի ասուլիսում նշել է, որ Ուզբեկստանը մտադիր չէ մտնել որեւէ, այդ թվում եւ մաքսային միության մեջ: Նրա կարծիքով, Ռուսաստանի, Բելառուսի, Հազախստանի եւ Կիրգիզիայի կնքած համաձայնագիրը ոչ թե դարձյալ հասարակական տնտեսական, այլ աշխարհաքաղաքական միություն է, ինչը ենթադրում է վերդնական կառույցների ստեղծում, որոնք դեսություններից կվերցնեն նրանց ինքնիշխանության մի մասը:

Բաքվից հետո Իսլամ Քարիմովը այցելեց Թբիլիսի, որտեղ բանակցեց Էդուարդ Շեւարդնաձեի հետ: Ստորագրվեցին երկու երկրների համագործակցության ընդլայնում ու խորացում նախատեսող 16 փաստաթղթեր:

«Մեր հանդիպումը Իսլամ Քարիմովի հետ տեւեց շուրջ երկու ժամ եւ անցավ լիակատար փոխըմբռնման դրայմաններում», համատեղ մամլո ասուլիսի ժամանակ ասել է Էդուարդ Շեւարդնաձեն: Բանակցությունների գլխավոր արդյունքը, նախագահի խոսքերով, «Վրաստանի եւ Ուզբեկստանի միջեւ համագործակցության ընդլայնման եւ խորացման հռչակագրի» ստորագրումն է:

Մամլո ասուլիսի ժամանակ նշվել է, ստորագրված փաստաթղթերի թվում շատ կարեւոր է ֆինանսա արդյունաբերական խմբերի ստեղծման հիմնական սկզբունքների, օդային եւ երկաթուղային հաղորդակցության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը: Նաեւ ձեւավորվեցին համաձայնություններ Կենտրոնական Ասիայի, Անդրկովկասի եւ Եվրոպայի երկրները կարճ ճանապարհով կապող անդրկովկասյան տրանսդորտային միջանցքի ստեղծման եւ շահագործման նախագծի իրականացման վերաբերյալ:

ԹՈՒՐՔԻԱ

Գերմանիան դեմ է Թուրքիայի՝ Եվրամիության լիիրավ անդամ դառնալուն

Հունաստանը ջնջեց իր եւ Թուրքիայի արտգործնախարարների հանդիպումը ժնեւում

Թուրքիայի վարչապետ Ս. Յիլմազի Գերմանիա կատարած այցելության ընթացքում կարեւոր հարցերից մեկը եղավ Իրանի հարցը: Ներկայումս Գերմանիայում հաստատված 2,2 մլն թուրք քաղաքացիներից կես միլիոնը Իրանի են: Գերմանական թերթերից մեկին տված հարցազրույցի ընթացքում Ս. Յիլմազը հայտնել է, որ Հունաստանից ավելի Գերմանիայի իշխանություններն են դեմ Եվրամիությունում Թուրքիայի լիիրավ անդամակցությունը արագացնելու աշխատանքներին: Գերմանիան մտահոգ է, հանի որ Թուրքիայի լիիրավ անդամակցության դեպքում տեղի կունենա թուրք բանվորների ներհոսք, ինչը կառաջացնի հասարակական եւ քաղաքական դժվարություններ:

Հունիսի 3-4-ը Բեռլինում տեսք է կայանան ՆԱՏՕ-ի խորհրդի ժողովները, որոնց մասնակցելու է նաեւ Թուրքիայի արտգործնախարար Էմրե Գյոնենսայը: Անառոլու գործակալության համաձայն, այս առթիվ տեսք է հանդիպում ունենան թուրք եւ հույն արտգործնախարարներ Էմրե Գյոնենսայը եւ Թեոդորոս Պանգալոսը: Վերջին դահին Հունաստանը ջնջեց հունիսի 3-ին նախատեսված արտգործնախարարների հանդիպումը ժնեւում, դաշտաբանելով Թուրքիայի ներկառավարական ճգնաժամը:

ՓՍՍՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ, ՌՖԻ

Թուրքիայի, Խորվաթիայի եւ Բոսնիայի նախագահները կհանդիպեն Անկարայում

ԱՆԿԱՐԱ, 29 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի, Բոսնիա-Հերցեգովինայի եւ Խորվաթիայի արտգործնախարարների Անկարայում տեղի ունեցած հոկտոմբ բանակցությունների ավարտին Թուրքիայի արտգործնախարար Էմրե Գյոնենսայը հայտարարել է, թե որոշվել է Թուրքիայի, Խորվաթիայի եւ Բոսնիա-Հերցեգովինայի նախագահների մասնակցությամբ գեղաստիճան հանդիպում կազմակերպել Անկարայում նախքան Բոսնիա-Հերցեգովինայի ընտրությունները, որոնք տեսք է կայանան սեպտեմբերի 14-ին: Ըստ «Ժամանակ» օրաթերթի, նախարարը հայտնել է, որ բանակցությունների ընթացքում արծարծվել են նաեւ Բոսնիա-խորվաթական դաշնակցության իրագործման եւ Դեյթոնի համաձայնագրի կիրառման վերաբերյալ հարցեր:

«ԵՐԵՎԱՆ-ԱՎԻԱ»
ավիաընկերությունը հունիսի 4-5-ին կազմակերպում է չվերթ
ՄՈՍԿՎԱ-ԵՐԵՎԱՆ
ուղղությամբ՝ Իլ-76 ինքնաթիռով:
Բեռի մինիմալ քանակը 1 տոննա,
գները շուկայականից ցածր:
Հեռ. 527864 (Երեւանում), 1254070 (Մոսկվայում):

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
էժան գնով
հագի ծպեր:
Հեռ.՝ 64-30-54

«ԱԶԳԸ»
աշխատանքի է
հրավիրում
մուտքագրող-
օպերատորների

ՀՈՒՆԻՍԻ 22-ից 29-ը
«ԱՅԱՔՍ» ՍՊԸ-ն հրավիրում է
մասնակցելու նոր տուրիստական
ուղեւորություններ
1. ԵԳԻՊՏՈՍ - ԻՍՐԱԵԼ
Կահիրե - Երուսաղեմ - Թել Ավիվ
հյուրանոցներ ★★★
սնունդ - օրը 2 անգամ
ճոխ Մսկուրսիոն ծրագիր
արժեքը - 888 $ համարժեք դրամ
2. ԵԳԻՊՏՈՍ
Կահիրե - 1 գիշեր
Պորտ Սայիդ - 2 գիշեր
Ալեքսանդրիա - 4 գիշեր
հյուրանոցներ ★★★ - ★★★★
սնունդ - օրը 2 անգամ
Մսկուրսիաներ - ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐ
- ՄՈՆՏԱՋԱ ՁՐՈՒՍԱՅԳԻ
արժեքը - 665 $ համարժեք դրամ
3. ԵԳԻՊՏՈՍ - Ծովափնյա հանգիստ ԿԱՐՄԻՐ ԾՈՎ
Կահիրե - 2 գիշեր
Խուրգադա - 5 գիշեր
հյուրանոցներ ★★★
սնունդ - օրը 2 անգամ
Մսկուրսիա - ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐ
արժեքը - 752 $ համարժեք դրամ
ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՄԻՋՊԵՍ ԴԻՄԵՔ ՄԵԶ
ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43Ա, ՀԵՌ. 53-15-73, 53-88-45

ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԻ ԴԵՄ
ԱԶԳԱՅԻՆ
ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՅԻ
ՕՐԵՐ
Մայիսի 27-ից 31-ը
Պատվաստումները կատարվում են
Ձեր տեղամասային
պոլիկլինիկայում:

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ծեռնարկությունների առաքարկի եւ պահանջարկի մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Գարբերանք» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արզումանյան 2 Գրանցման թիվ 65. Դասդ 69149. Պատվեր 2102 Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության՝ 29. 05. 1996 Գինը՝ 75 դրամ

digitised by A.R.A.R.@